Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

87
Ч-33
2953

2011

№ 2003

# ՓԵԴՐՈՍԻ

## ԱԶԱՏԱԳՐԻՆ ԱՒԳՈՍՏԵԱՑ

## ԱՌԱԿՔ

87-10
Կր-33

# ՓԵԴՐՈՍԻ

## ԱԶԱՏԱԳՐԻՆ ԱՒԳՈՍՏԵԱՑ

### ԻՆՔՆԱԿԱԼԻ

## Ա Ռ Ա Կ Ք

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ Ի ՁԵՌՆ

ՏԵԱՌՆ Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1855

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

900

# ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

## ԱՌ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՊԱՐՈՆ

# ԱԲՐԱՀԱՄ ԱՂԱՆՈՒՐ

### ՈՒՂԵՐՁ

*Սիրօղդ ընտիր ախորժակաց և սիրելիդ Մուսայից,*
*Ընկալ և զայս երկ դուզնաքեայ ոչ անարժան Քեզ 'ի նուէր.*
*Զի ուր երէք 'ի սմա Թարգմանք ազատագրին Աւգոստեայ*
*Խրատեն զարբունս յիմաստութիւն խրատ և ալեաց ընծայեն,*
*Ինքն աստ առեալ ըզքամասէրն ածէ 'ի կիրթ ախորժակ,*
*Գետահետեալ մերոյս ոճոյ ասիական յորդութեան*
*Գալարագեղ իբր ոլորտից քոյդ Եփրատայ կանգնել Թումբ:*
*Այսպէս 'ի Քէն սա հրաւիրեալ 'ի Հայս, ով մեծդ ԱՂԱՆՈՒՐ,*
*Քեզ շնորհապարտ օրհնից յաւերժ ընկալցի ձօնս 'ի նոցունց:*

# ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Առակախօսն Փեդրոս Թրակացի էր հայրենեօք, ծնեալ մերձ 'ի սահմանս Մակեդոնիոյ, վասն որոյ Մակեդոնացի յոմանց համարեցաւ. և եկաց նա սակաւ ինչ ամօք յառաջ քան զԹուականութիւն Փրկչին: Գերեալ 'ի հռովմայեցւոց, և սորուկ եղեալ ինքնակալին Աւգոստեայ, վասն գեղեցիկ իւրոյ հանճարոյն ազատութիւն 'ի նմանէ ընկալաւ: Յայնմ հետէ պարապէր նա 'ի բանասիրութիւն, և այնպէս քաջ վարժեալ 'ի լատին բարբառ՝ զի և ըստ այսմ մասին առակք նորա են անմահականք, որպէս և ինքն իսկ ուրեք 'ի տաղս իւր գուշակէ: Նախ զերիս գիրս յայնցանէ եա 'ի լոյս՝ իբր Թարգմանութիւնս առակացն Եզովպոսի. ապա զչորրորդն առ ինքնակալութեամբ Կղաւդեայ, և ապա զհինգերորդն յանձնէ ստեղծաբանեալ: Բայց եսովպեանցն իսկ այնպիսի կերպարանս բանից յաւել, զի գեղով ոճոյն հաւասարէ հանճարոյ գիւտից բնագրին: Մեռաւ նա 'ի վերջ կոյս ինքնակալութեանն Կղաւդեայ. առ կենդանութեամբ իւրով բազում հալածանս կրեալ 'ի բազմաց, մանաւանդ 'ի Սէյանոսէ ումեմնէ, և յետ մահուն իսկ 'ի համախոհից նորա հալածէր. բայց պատճառք հալածանացն անգիտելի:

Առակք նորա ընդ բազում դարս անծանօթ 'ի մատենադարանի ուրեք ծածկեալ, 'ի վերջ կոյս ԺԶ դարու ածան 'ի լոյս, և համարին ընդ գրաւորական հրաշակերտս նախնեաց. որպէս զի հանգիտապատիւք իւրեայ մեծարին առակախօսք երեքին, Եսովպոս առ Հելլէնս, Փեդրոս առ Հոռոմս, և Լաֆոնթէն առ Գաղղիացիս. որոց իւրաքանչիւր այնպիսի է ճարտարութիւն, զի դժուարին է սահմանել ո քան զո իցէ գերագանց: Ի դէպ իսկ է և չորրորդ ընդ սոսին զմերս դասել

*առակախօս Հայկազն զՄխիթար Գօշ, որ ըստ հանճարեղ զկուտիցն և ըստ ինքնազարդ բնիկ բարբառոյն ոչ ինչ ստորև մնայ քան զնոսին, զուրկ ևեթ 'ի բանաստեղծական խմատից նոցին և 'ի քերթողական ասացուածոց:*

*Ոչ անօգուտ զզուգնաքեայ երկս զայս համարիմ մերազնեայ բանասիրաց, որ 'ի համառօտ և 'ի ճշգրիտ ոճ առակախօս քերթողիս զտանիցեն չնորհս իմն զմայլելի, թէ արդեօք և նախանձելի՝ առ 'ի չզեղծանելոյ ասխական ճոխութեամբ մերոյս բարբառոյ:*

# ՓԵԴՐՈՍԻ

# ԵՍՈՎՊԵԱՆ ԱՌԱԿԱՑՆ

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

---

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

*Զոր Եսովպոս առակախօսն հանճարեաց,*
*Վեցոտնեան ոլորեցի ես 'ի տող։*
*Երկակի է մատենկանս այսմիկ ձիր․*
*Դըրդել ծիծաղ, և հրահանգել ըզգօն խրատուք ըզկենցաղ։*
*Իսկ բողոք թէ բառնայցէ ոք ըզմընջ,*
*Զի երէք 'ի սմա և ծառք բարբառին,*
*Յուշ լիցի զի 'նդ խաղ առակըս կեղծեմք։*

## ԱՌԱԿ Ա.

### ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

*Դիւրին է հարստահարել զանմեղն.*

---

Ի նոյն գետակն հասին վարեալք 'ի ծարաւոյ գայլ և գառն.
Գայլ 'ի վերոյ ըմպայ կայր, գառն 'ի բացեայ 'ի ստորև։
Չենն 'ի հրապոյր յայնժամ դըրդեալ յարինախանձ որկորոյն,
Գըրգիռ 'ի մէջ էարկ բողոք բառնալով.
Ընդէ՞ր զալիսըդ պըղտորես ինձ 'ի յումպ։
Պատասխանի ետ գեղմնաբարձն ահաբեկ.
Յիս, գայլ. զիա՞րդ կարեմ զոր դուդ բողոքես,
Ո՛չ 'ի քէն ալիքդ ինձ 'ի յարբումն իջանեն։
Յաղթահարեալ փաստիցն 'ի սաստ գայլն յաւել.
Այլ անիծեր դու զիս, ամիսք են վեցեակ։
Կըրկնեաց գառնիկն. Եւ ոչ ծընեալ դեռ ևս էի ես յայնժամ։
Իսկ նա երդուեալ, Ո՛ն և ո՛ն, հայր քո ուրեմն անէծ զիս.
Եւ ժանտաժուտ ժանեօքն ըզնա յօշատեաց։
Ի ձահ առակս այս այնոցիկ պատահէ,
Որոց զանմեղըս կեղեքեն բարբանոք։

---

## ԱՌԱԿ Բ.

### ԳՈՐՏՔ Ի ԽՆԴԻՐ ԹԱԳԱՒՈՐԻ

*Փոքրագոյնն 'ի չարեաց է ընտրելի.*

---

Մինչ ծաղկէին Աթէնք արդար օրինօք,
Ազատութիւն խեւ ըզքաղաքն աղմըկեաց.
Եւ ժըպիրհ յանդըգնութեան ըզվաղեմին լուծեալ սանձ,
Պառակտեցան գունդք այլ և այլ դաւակցաց.
Գրաւեաց զամրոցըն Պիսիստրատ բըռնաւոր։

Եւ մինչ ընդ դառըն գերութեամբըն ատոկեցիք հեծէին,
Ոչ զի անգութ և անողորմ ոք էր նա,
Այլ զի ընաւէր է ծանրակիր բեռըն նոր.
Ի բառնալ նոցին բողոք զայնմանէ,
Զայս յայնժամ նոցին Եսովպ արկ առակ.
Թափառական 'ի լայն ճահիճս ազգ գորտոց
Թագաւոր 'ի Դիոսէ ճըչիւ մեծաւ խընդրեցին,
Սանձահարել զապերասան իւրեանց բարս.
Ծիծաղեցաւ հայրն աստուածոց 'ի վերուստ,
Եւ ետ գերան փոքրիկ նոցին Թագաւոր.
Որ անդր 'ի հունն յանկարծակի ընկեցիկ,
Դըղըրդելով և ճըղփմամբ ահաբեկեաց զազգն երկչոտ.
Եւ մինչ 'ի տիղմն անկեալ դընէր խորասոյզ,
Ոմն 'ի գորտոց լռիկ մընջիկ հանեալ ըզգլուխն 'ի լըճէն,
Եւ զԹագաւորն հետաղօտեալ՝ կոչէ զընկերսն համօրէն.
Նոքա 'ի բաց եդեալ զերկիւղ, անդր 'ի լող
Աճապարեն ընդ հակառակս իրերաց,
Եւ ըզփայտիւն ընդոստ ամբոխն ըստահակ,
Թըշնամանեալ զայն բազմաբիւր լուտանօք,
Առաքեն առ Արամազդ միւս այլ խնդրել Թագաւոր,
Զի անպիտան նախընծայեալն էր նոցին.
Յայնժամ յըղեաց նոցա Դիոս ըզվիշապ.
Որոյ սկըսեալ դըժնեայ ժանեօքըն խածատել ըզգորտեարն,
Ընդ վայր յայնժամ 'ի հարուածոյն խոյս ապիկարքըն տային.
Հեղձամըղձուկ ըզկուիչ նոցին արար ահ.
Աղերսաւոր գաղտ առ աստուածն ապա յըղեն ըզՀերմէս,
Տառապելոցըն ժամանել յօգնութիւն.
Զայս Արամազդ յայնժամ նոցին ետ պատգամ.
Զի ապաշնորհք բարւոյն գըտայք, ժուժկալեցէք արդ չարին.
Եւ դուք եւս, ո՛ քաղաքացիք, յաւել նոցին Եսովպոս,
Համբերեցէք չարին, զի մի՛ ձեզ չարագոյն ինչ հասցէ.

## ԱՌԱԿ Գ.

## ՃԱՅ ԵՒ ՍԻՐԱՄԱՐԳ

*Քոյովդ շատացիր.*

---

Իւրաքանչիւր յիւրումըն կալ պայմանի,
Եւ մի 'ի գոյս այլոց անձանց պերճանալ,
Իսրատէ Եսովպ ըզմեզ այսու առակաւ։
Ճայն 'ի մնապարծ հըպարտութիւն ուռուցեալ,
Թափեալ փետրովք սիրամարգի ըզձնազգեստ,
Ի չըքնաղ նոցին երամ խառնեցաւ,
Արհամարհոտ պերճանօք յիւրսն ակնարկեալ։
Նոքա զժըպիրհ հաւուն կապտեալ ըզփետուրս,
Հալածական ըզնա կըտցօքն արարին։
Ճայն անփետուր և չարագան յազգ իւր դարձեալ կորակոր,
Ընտի իսկ դառն անարգանօք մերժեցաւ։
Յայնժամ մի ոմն 'ի նոցանէ, զորս անգոսնեալն էր կանխաւ,
Թէ գոհ ընդ մերս, ասէ, էիր ընդ պայման,
Համբերելով որ ինչ բնութիւն ետ քեզ բախտ,
Ոչ թըշնամանքդ այդոքիկ քեզ դիպէին,
Եւ ոչ այդպէս դու հէք 'ի բաց մերժէիր։

---

## ԱՌԱԿ Դ.

## ՇՈՒՆ ՊԱՏՐԵԱԼ

*Ագահն յաճախ յագահութենէ իւրմէ դաւի.*

---

Որ զօտարին յափըշտակել ինչ խնդրէ,
Իրաւապէս զիւրն իսկ մատնէ 'ի կորուստ։
Ընդ գետ 'ի լող միս 'ի բերան անկեալ շուն,
Ետես 'ի ջուրցն անդ հայելւոյ զըստուեր իւր.
Եւ այլ յիւրմէ անտի զաւարն համարեալ,

Հաւախած առնել և զայն խորհեցաւ.
Բայց 'ի պատրանս ագահութիւն ըմբռնեալ,
Զոր ունէրն 'ի բերանի՝ ելիք զայն,
Եւ ոչ միւսումն զոր խնդրէր՝ պատահեաց ։

---

## ԱՌԱԿ Ե.

### ԱՐՋԱՌ, ԱՅԾ, ՈՉԽԱՐ ԵՒ ԱՌԻՒԾ

*Փախիր յընկերութենէ հզօրի.*

---

Մին երբէք յընկերութիւն հզօրի
Մտանել ուսուցանէ առակս այս ։
Արջառ և այծ և զրկանաց երկայնամիտն ոչխարակ,
Ընդ առիւծու ընկերշակեալ յանտառի,
Որսացան ըզյաղթանդամ եղջերու ։
Եւ 'ի բաժնեսն անդ աւարին այսպէս առիւծ բարբառի.
Իմ նախամասն է, զի առիւծ անուանիմ.
Եւ զի հզօր եմ, ինձ ըզմիւսն առէք մասն.
Ինձ և երրորդն իսկ է անկ, զի գոմ արի քան ըզձեզ.
Վա՛յ իշխելումն հուպ 'ի չորրորդըն լինել ։
Այսպէս զաւարըն բովանդակ յափշտակեաց չարութիւն ։

---

## ԱՌԱԿ Զ.

### ԳՈՐՏՔ ԱՌ ԱՐԵՒ

*Զարաց զաւակ չար.*

---

Ի հարսանիս դրացւոյ գողոյ զայս Եզովպոս արկ առակ ։
Կին առնել երբեմն արեգ խորհեցաւ.
Եւ եբարձ գորտեանն յաստեղըս բողոք ։
Յանհրատաղտուկ յաղաղակէն հարց ըզվասն էրըն Դիոս,

Եւ 'ի բնակչաց անտի լըճին պատասխանեաց ումն յայնժամ.
Եթէ մին տոչորէ զլիճս համօրէն ,
Եւ մահ հէքացս ածէ 'ի սիկըն ցամաք ,
Զինչ ապա եթէ որդէք իւր ծընցին :

---

## ԱՌԱԿ Է.

### ԱՂՈՒԷՍ ԵՒ ԴԻՄԱԿ

*Անարգ են փառք անմտի.*

Ըզդիմակ ողբերգական տեսեալ ուրեք աղուէսու ,
Ո՜հ քանի գեղատեսիլ, ասէ , այլ սին 'ի խելաց:
Առակս 'ի ճահ գայ այնոցիկ , որոց բախտ
Ընձեռեալ փառս և պատիւ , ժըլխտեալ նոցին ըզհանճար :

---

## ԱՌԱԿ Ը.

### ԳԱՅԼ ԵՒ ԿՌՈՒՆԿՆ

*Վտանգ է բարերարել չարաց.*

Որ ոք վարձս ընդ վաստակոց յանըզգամէն պահանջէ ,
Կըրկին վրիպէ. անարժանին նախ օգնեալ,
Եւ զի դարձեալ ոչ անպատիժ զերծանի :
Ոսկր 'ի կոկորդ մըխեալ գայլոյ մինչ կլանէր ,
Տըւայտեալ դառնակըսկիծ՝ 'ի խըլէլ ըզցաւն յորկորոյն
Վարձիւք ըզմէն մի յորդորեալ հրապուրէր :
Խորդ ուր ուրեմն 'ի յերդմանէն համոզեալ,
Զուլն երկայնաձիգ որկորըստեանն հաւատաց ,
Բազմավըտանգ ներգործելով բըժըշկութիւն գազանին :
Ի խընդրել ըզպայմանեալն ապա վարձ ,
Ապաշնորհ դու , ասէ , որ զերծուցեալ անվընաս
Յորկորոյ մերմէ ըզգլուխ քո 'ի բաց ,
Եւ տակաւին իշխես խընդրել վարձս 'ի մէնջ :

## ԱՌԱԿ Թ.

### ՃՆՃՂՈՒԿ ԵՒ ՆԱՊԱՍՏԱԿ

*Մի՛ ոտնհար լինիր թշուառին.*

---

Որ անըզգոյշ անձին զայլս 'ի զգուշութիւն յորդորէ,
Սուղ ինչ տողիւք ցուցից ըզնա անհանճար ։
Ըմբռնեալ 'ի յարծուոյ՝ ճըչէր ուժգին նապաստակ.
Թշնամանեաց ըզնա ճընճղուկ. Ո՞ւր, ասէ,
Ընդելական երագութիւնդ է քոյին.
Ոտք քո ընդէ՞ր թեթեւընթացք դադարեն ։
Բանքն 'ի բերան դեռ կային, հասեալ անգեղ 'ի վերայ
Եւ սպան ըզնա մինչ բողոքէրն ընդունայն ։
Այսպէս յայնժամ առ 'ի սփոփումըն մահուն
Բարբառելով նապաստակին կիսամեռ.
Որ անվեհեր զարկածըս մեր ծաղրէիր,
Հանգոյն ճըչիւ զօրհասդ ողբաս արդ քոյին ։

---

## ԱՌԱԿ Ժ.

### ԳԱՅԼ, ԱՂՈՒԷՍ ԵՒ ԿԱՊԻԿ

*Այր ստախօս և 'ի ճշմարտախօսելն իւրում չիցէ հաւատարիմ.*

---

Որ ոք ըզվատ խաբէութեան էառ ըզկեղծ միանգամ,
Ոչ եւս իցէ հաւատարիմ թէպէտ և ստոյգ խօսեցեալ.
Զայս քեզ հակիրճ վկայէ առակս եսովպեան ։
Յեղեռըն գողօնից ամբաստանէր գայլ զաղուէս,
Իսկ նա անպարտ չարեացըն գոլ բողոքէր ։
Դատաւոր 'ի միջի կապիկն յայնժամ բազմեցաւ.
Եւ 'ի ճառել երկաքանչիւր զանձին դատ,
Աւանդէն տըւեալ կապկին զայս վըճիռ.
Անշուշտ չիցէ քո կորուսեալ զոր պահանջեսդ, ո՛վ գայլիկ.
Եւ քո անշուշտ գողացեալ զոր գեղեցիկըն ժըխտես ։

## ԱՌԱԿ ԺԱ.

### ԷՇ ԵՒ ԱՌԻՒԾ

*Ծաղրելի են պարծանք քաջութեան 'ի վատն.*

---

Որ մնապարծին առանց արդեանց քաջութեան,
Զանծանօթս արդեօք պատրէ, այլ ծաղըր կայ ծանօթից։
Յորս ընդ իշոյ առիւծ երբեմն արշաւեալ,
Մացառաղօղ ըզնա 'ի թուփըս թագոյց,
Խրատեաց ըզնա ընդել ձայնիւն ահ արկանել երէոց,
Զի զփախըստեայս ինքն ըմբռնել կարասցէ։
Ուժգին յայնժամ եբարձ մեծունկըն խանչիւն,
Նորանըշան ձայնիւ խռովեալ ըզգազանս.
Որոց ընդ ելըն ծանօթ դիմեալ արտաքս ահաբեկ,
Ընկճեցան յահեղաստատ յարձակմանէ առիւծուն։
Կոտորածիւն ապա գազանըն խոնջեալ,
Ձայնէ առ էշն և հրամայէ նըմա զըղունչն ամփոփել.
Յայնժամ խրոխտեալ նա՝ Ի՞բր, ասէ, արդիւնք ձայնիս քեզ թըւին։
Պատասխանէ առիւծ. Կարի հիասքանչ,
Մինչ զի թէ ոչ քաջածանօթ էր ինձ բնութիւն քո և ազգ,
Հանգոյն և ես երկիւղիւ խուճապէի 'ի փախուստ։

---

## ԱՌԱԿ ԺԲ.

### ԵՂՋԵՐՈՒ ԱՌ ԱՂԲԵՐ

*Կարևորագոյն գտանի յաճախ զոր արհամարհեմքն.*

---

Որ արհամարհ ինչ քեզ թըւի և անարգ,
Օգտակար քան զոր գովեսդ է յաճախ,
Վկայէ այսմիկ առաջիկայս քեզ առակ։
Եղջերու յըմպելն ըզկայ առեալ յաղբեր,
Եւ յալիս անդ ըզպատկեր իւր տեսեալ
Մինչ ընդ եղջերսըն բազմաճիւղս ըսքանչանայր և գովէր,

Ըզվըրուանցն անգոսնելով նրբութիւն,
Ի ձայնէ որսորդաց յանկարծակի ահաբեկ,
Փախուստ ընդ դաշտն առեալ թեթեւ ընթացիւք,
Ըզբարակացն արար ըղձիցն 'ի գերեւ :
Ի յանտառ անտի դիմեալ միջամուխ,
Կառեան եղջերք իւր արգելեալ 'ի կողերս,
Եւ 'ի դըժնեայ շանց խածատեալ յօշեցաւ :
Աւանդէն 'ի մեռանելն յայնժամ այսպէս բարբառեալ.
Աւա՛ղ հէքիս, անագան այժմիկ լինիմ խելամուտ,
Զի որ անարգք կարծեցեալ՝ պիտանեգոյնք գըտան ինձ,
Եւ որ թուէին գովելիք, եղո՜ւկ, կորուստ ինձ ածին :

---

## ԱՌԱԿ ԺԳ.

## ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱԳՌԱՒ

*Չիք դարանակալ չար քան զշուրթն շողոքորթ.*

---

Որ զփաղաքուշ շըրթանց ըղձոյս ախորժէ,
Զանագան ըստըրջանաց ամօթապարտ տացէ վրէժ :
Բարձր 'ի կատար ծառոյ բազմեալ կայր ագռաւ,
Ըզպանիր յափըշտակեալ ընդ երդ առնուլ 'ի ճաշակ :
Ետես աղուէս, եւ զնա այսպէս շողոմեաց.
«Քանի՜ն փետրոցդ է փայլ, ագռաւիկ,
«Քանի չըքնաղ դիմաց քոց գեղ եւ մարմնոյդ.
«Դու զդայլայլիկըս թէ էիր վիճակեալ,
Ոչ ոք յաղթօղ քեզ յօդայնոց գըտանէր :
Իսկ անմիտն առ 'ի զբարբառ իւր լըսելի առնելոյ՝
Թող ըզպանիրն 'ի շըրթանց,
Զոր նենգաւորն աղուէս սոլեալ ժանեօքն արար հասեւխած :
Ագռաւուն անդ ապշութիւն պատրեալ յոգւոց եհանէր :
Տես աւասիկ քանի հըզօր է հանճար,
Եւ եբր յաւերժ իմաստութիւն յաղթանակէ զօրութեան :



6989
1007
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI--1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ԱՌԱԿ ԺԴ.

## ԿԱՐՈՒԽԱԿ ԲԺԻՇԿ

*Խաբուսիկ է ճանկին դատապատան.*

---

Զրքաւորեալ կարուակ երբեմն անհրմուտ,
Ծարուեստ բըժըշկական վարէր յերկիր անծանօթ,
Նա 'ի վաճառ խաբեպատիր դեղթափոյ
Պաճուճանօք բանից առնէր իւր անուն ։
Սաստիւ ծանու անդանօր իշխան երկրին ըմբռնեալ՝
Խնդրեաց բաժակ, և առ 'ի փորձ՝ լըցեալ ջուրբ,
Ընդ անդեղայս նորին կեղծեաց խառնել թոյն,
Նա հրամայեաց ըմպել զայն, վարձըս նըմա խոստացեալ ։
Յահէ մահուն եղև նա անդ խոստովան,
Իբր ոչ եթէ բըժըշկական մարթանօք՝
Այլ զարմանօք ռամկին համբաւ ըստացեալ ։
Յայնժամ արքայն կոչեալ զամբոխն յաւել զայս .
Անմիտք, որ զկեանըս ձեր դըմա վստահէք,
Ում և ոչ ըզգարշապար իսկ իւր ոք տայ 'ի կօշկել ։
Ի ճահ զառակըս զայս դատիմ այնոցիկ,
Որոց տըխմար անմըտութիւն ընձեռէ շահ ժըպրհութեան ։

## ԱՌԱԿ ԺԵ·

### ԷՇ ԱՌ ՎԱՐԻՉ ԻՒՐ

*Ռամիկն զտէր և ոչ զբախտ փոփոխէ.*

---

Զի 'ի փոխել իշխանութեան՝ անուն ևեթ իշխանին
Եւ ոչ այլ ինչ վասըն ռամկին փոփոխի,
Տացէ առակս այս քեզ հակիրճ յարացոյց ։
Ծերունի երկչոտ զէշակ իւր արածէր ընդ արօտ .
Եւ յեղակարծ 'ի շըշուկ հինից եղեւ ահաբեկ,
Զէշն 'ի փախուստ յորդորէր զի մի գերի վարեսցին ։
Իսկ նա անշարժ կացեալ, ասէ . Միթէ կըրկնակ ինձ համետ
Կարծիցես թէ յաղթականըն դիցէ ։
Ծերն ասէ . Ոչ ։ — Զի՞ փոյթ ուրեմն իցէ թէ ում ծառայեմ,
Եթէ մընայ ինձ միշտ կըրել ըզհամետ ։

---

## ԱՌԱԿ ԺԶ·

### ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ՈՉԽԱՐ

*Յերաշխաւորէ անզգամէ զգոյշ լեր.*

---

Ի ցուցանել նենգաւորին զերաշխաւոր անըզգամ,
Ոչ պարտուցն 'ի հատուցումն, այլ 'ի չարեաց գիտէ հնարս ։
Եղջերու խընդրէր գըրիւ մի ցորենոյ յոչխարէ,
Երաշխաւոր փոխոյն ըզգայլ ածելով ։
Նա խաբկանացըն կանխատես առարկեաց .
Գայլոյ յափըշտակել և գնալ 'ի բաց սովորեալ,
Եւ քո արշաւասոյր խոյս 'ի յաչաց տալ յանկարծ ,
Ո՞ւր ես ըզձեզ յօր հատուցմանըն գըտից ։

## ԱՌԱԿ ԺԷ.

### ՈՉԽԱՐ, ՇՈՒՆ ԵՒ ԳԱՅԼ

*Զրպարտչին կայ և մնայ պատուհաս.*

---

Սրտախօսի հասանէ ստէպ ըզվրէժ չարեաց լուծանել ։
Շուն զըրպարտիչ հաց յոչխարէ պահանջէր,
Յաւանդի երբեմըն զայն տըւեալ նմա պընդելով.
Ի վկայութիւն կոչեցեալ գայլ, հաստատէ
Ոչ միոյ՝ այլ պարտապան ըզնա տասանց իսկ հացից ։
Դատապարտեալ սուտ վըկայիւն ոչխար, տուժեաց զայն անպարտ ։
Աւուրք անցին, ետես նա զգայլ անկեալ անել 'ի փոսի,
Նա ասէ. Այդ 'ի վերնոց նենգաժիտին կըշռի վարձ ։

---

## ԱՌԱԿ ԺԸ.

### ՇՈՒՆ ԾՆՆԴԱԿԱՆ

*Փակեա զանձնայն մուտս չարին.*

---

Բազմավըտանգ անըզգամաց են հրապոյրք,
Յորոց ըզգոյշ ազդեն կալ տողքս այսոքիկ ։
Շուն 'ի յերկունս աղերս այլում արկեալ շան,
Ի խըշտեակ նորա զշընիկունսն աւանդել,
Եղև դիւրաւ լըսելի.
Նա ապա ստիպեալ տեղի տալ անտի,
Սուղ ինչ այլ ևս հայցէր շնորհել ժամանակ,
Մինչև սկընդկունքըն զօրացեալ՝ տեղափոխել կարասցեն ։
Անց և այն, և մինչ ուժգին միւսն ըզխըշտեակըն խընդրէր,
Նա ստամբակեալ ասէ. Այո՝ տաց տեղի,
Թէ զդէմ ունել ինձ և իմոցըս զօրես ։

## ԱՌԱԿ ԺԹ.

### ՇՈՒՆՔ ՍՈՎԵԱԼՔ

*Անմտութիւն առն յաճախ 'ի կորուստ.*

---

Խորհուրդ անմիտ ոչ յարգասեաց ևեթ գտանի միշտ ունայն,
Այլ և յաճախ ածէ 'ի վտանգ ըզմարդիկ:
Խորասոյզ ըզմաշկ 'ի գետ տեսեալ շանց,
Ըմպել ըզջուրն ըսկըսան
Որ 'ի դիւրաւ առնուլ յալեաց զայն 'ի վեր.
Այլ չև ըղձիցն հասեալ, կորեան պայթուցիկք:

---

## ԱՌԱԿ Ի.

### ԱՌԻՒԾ ԶԱՌԱՄ, ԿԻՆՃ, ԶՈՒԱՐԱԿ ԵՒ ԷՇ

*Թշուառին և վատն անգամ՝ լինի ոտնհար.*

---

Որ ըզնախնին կորուսանէ ոք ըզփառս,
Լինի յարկածս անդ և վատաց խաղալիկ:
Մինչ նըւաղեալ յամաց տըկար և անզօր
Անկեալ դընէր առիւծ յօդիս ապաստան,
Ճանղաձև ժանեացըն կինճ վըրիժակօք
Մատեաւ առ նա առնուլ ըզվըրէժ իւր վաղեմի 'ի հարուած:
Ընդ հուպ և ցուլ ածեալ զեղջերսըն դըժնեայս,
Խորամուխ արկ 'ի յիրան ոխերմին:
Էշ տեսեալ զի անպատիժ մարթէր վնասել գազանին,
Աքացի և նա զճակատ նորին եհար ջաղջախեաց:
Յայնժամ 'ի շունչ յետին այսպէս եարկ առիւծըն բողոք.
Թըշնամանաց քաջացն հաղիւ համբերի,
Այլ քոյոդ 'ի ժուժկալել, ո՛վ նախատինքըդ բնութեան,
Թըւի իմ մահունըս կըրկնակի մեռանել:

## ԱՌԱԿ ԻԱ.

### ԱՔԻՍ ԵՒ ԱՅՐ

*Որ 'ի խնդիր շահու անձին գտանի այլում պիտանի, 'ի զուր պահանջէ շնորհակալիս.*

---

Ըմբռնեալ յումեմնէ աղերս աքիս արկանէր
Առ 'ի խուսել 'ի մօտալուտ մահուանէն.
Յիս, տէր, խնայեա, մաքրեմ ըզտուն քո 'ի մկանց զըժնէից ։
Իսկ նա ասէ. Վասն իմ թէ զայդ առնէիր,
Շնորհապարտ քեզ թողութիւն շնորհէի.
Այլ զի դու 'ի փըշրանացն 'ի նոցանէն կըրծելեաց,
Եւ 'ի նոցին իսկ վաստակես առ 'ի կուլ,
Մի 'ի զուր բարերարել ինձ պարծիր ։
Ասաց և զժանտն անդէն եհար սատակեաց ։
Զայս առ ինքեանըս գիտասցեն ասացեալ,
Որ օգտին ևեթ իւրեանց 'ի խնդիր,
Երախտաւորըս գոլ պարծին անմըտաց ։

---

## ԱՌԱԿ ԻԲ.

### ՇՈՒՆ ՀԱՒԱՏԱՐԻՄ

*Կեղակարծք են բարերարութիւնք անզգամաց.*

---

Որ յանկարծ առատաձեռն՝ հաճոյ թըւի անմըտաց,
Իսկ իմաստնոց 'ի զուր հնարի նիւթել դաւ ։
Գող գիշերայած հաց 'ի հրապոյր եարկ շան,
Որկորըստեամբ դաւել ըզնա փորձելով ։
Իսկ նա, Ո՛ն անդր, ասէ, 'ի բաց կաց, չըկարես դու կարկել
Զհաչիւն ձայնիս իմոյ 'ի պահ տէրունի.
Խաբիս խաբիս, անակընկալ քոյդ պարգև
Ըզգուշացոյն ինձ ազդ առնէ 'ի հըսկել,
Զի մի գուցէ յանցմամբ իմով զեղծիցիս ։

## ԱՌԱԿ ԺԳ․

### ԳՈՐՏ ԵՒ ԱՐՋԱՌ

*Մի՛ ձգտիր նմանել հզօրի.*

---

Նախանձաւոր լեալ մեծատան մտանէ աղքատն 'ի կորուստ ։
Գորտոյ զարջառ տեսեալ ուրեք 'ի դաշտի ,
Նա մեծութեան նորին նախանձ բերելով ,
Ուռոյց ըզմորթըն խորշոմեալ, և հարցանէր ցորդիս իւր՝
Որդեօք է՞ր ըստուարացեալ նոյնպէս ։
Ասեն ․ Ոչ ։ Նա ուռուցեալ սաստկագոյն ,
Եհարց դարձեալ ․ Ո՞ ստուարագոյն էր յերկուց ։
Նոքա ետուն պատասխանի թէ Արջառ ։
Զայրացեալ ապա մինչ գուն գործէր ուժգին ևս ուռնուլ ,
Գիտապաստ անկաւ յերկիր պայթուցեալ ։

---

## ԱՌԱԿ ԺԴ․

### ՇՈՒՆ ԵՒ ԿՈԿՈՐԴԻԼՈՍ

*Ի զուր ամեղ և ցնոյ չարեաց վարժ.*

---

Որք չարեաց լինին խրատիչք ըզգօնից ,
Զուր ջանացեալ և լինին ծաղր և ծանակ ։
Արշաւակի ասեն ըմպել շանց 'ի յալեաց Նեղոսի ,
Գուցէ զնոսա 'ի կուլ տայցեն կոկորդիլք ։
Արդ մինչ ըմպէր արշաւասոյր մի 'ի շանց ,
Յուշիկ արբ , ասէ նըմին կոկորդիլ ․
Զի՞ փութաս , զի՞ զանգիտես , մերձ մատիր ․
Ընկերկեան լեր , չիք տեղի աստ դաւոյ ։
Իսկ նա ասէ ․ Արժէր այս՝ բնաւին ինձ գոլ անկասկած ,
Թէ ոչ սովեալ ըզքեզ մարմնոյս գիտէի ։

## ԱՌԱԿ ԻԵ·

### ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԱԳԻԼ

*Հաւասար կշռիւ փոխարէնք.*

---

Խրատէ առակս ումեք երբէք մի՛ վնասել։
Իսկ որ վնասէն, արդարապէս տուժեսցի։
Աղուէսու ասի 'ի ճաշ նախ հրաւիրեալ զարագիլ,
Լոյծ 'ի պնակի պատրաստելով նըմա ումպ,
Զոր ճաշակել երբէք նըմա չէր հընար։
Հրաւէր ապա արար և ինքն արագիլ,
Եւ մատուցեալ լի փըշրանօք շիշ 'ի մէջ,
Կըտուց 'ի ներքս արկանէ ինքն 'ի յագուրդ,
Սովալըլուկ ըզճաշակից իւր թողեալ։
Եւ մինչ 'ի զուր լիզոյր նա զուլն անօթոյն,
Աւանդի չըքնաղագիւտ հաւոյն այսպէս խօսեցեալ.
Համբերութեամբ պարտի կըրել որ ինչ այլում ոք արար։

---

## ԱՌԱԿ ԻԶ·

### ՇՈՒՆ ԵՒ ԱՆԳՂ

*Ագահն անձամբ անձին է դահիճ.*

---

Ի դէպ առակս այս ելանէ ագահաց,
Եւ որ նըւաստք 'ի ծնէ՝ ցանկան մեծանալ։
Շուն 'ի կըրկտել ըզգերեզմանս եգիտ գանձ.
Եւ պըղծելով զուրուս՝ հարաւ յընչից տենչ,
Զի ըզկրօնից սըրբոց վըրէժս հատուցէ.
Եւ մինչ գանձուցըն կայր տըքնէր նա 'ի պահ,
Ի մոռացօնս ըզպարէնս արկեալ՝ սովով մաշեցաւ։
Ում առընթեր կացեալ անգեղ, աւանդեն զայս ասացեալ.
Յիրաւի անկեալ դընիս աստ, ո՛վ շուն,
Որ ցանկացար արքունական ճոխութեանց
Ծընեալդ 'ի գուեհս անդ և սընեալ 'ի յաղբիս։

## ԱՌԱԿ ԻԷ.

### ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՐԾՈՒԻ

*Մի՛ հզօրդ արհամարհեր զտկարն.*

---

Որչափ և վեհ ոք իցէ, պարտի խնթալ 'ի նուաստից.
Զի հնարիմաց համձարոյ վրէժխնդրութիւն կայ պատրաստ:
Յափշտակեալ արծուոյ զկորիւնս աղուեսու,
Տած 'ի բոյն իւր տալ ձագուցն 'ի ճարակ:
Մայրն հետամուտ նորին աղերս արկանէր,
Մի՛ զդառնաղէտ հէքացելումն ածել սուգ:
Արհամարհեաց նա բարձր 'ի կայս իւր վստահ:
Բայց աղուեսուն 'ի բագնէ առեալ ըղջահ բոցավառ,
Հուր ըզծառոյն հար ըզբնոյ
Վրէժ խնդրել յասուխէն ձագուց նորին կորուստեամբ:
Յանժամ արծուին աղերսաւոր դարձոյց ըղձեա աղուեսուն,
Որ 'ի թափել զկերսն 'ի մահուն արկածէ:

---

## ԱՌԱԿ ԻԹ.

### ԳՈՐՏՔ ԵՒ ՑՈՒԼՔ

*Յերկպառակել հզօրաց տկարք կրեն զվտանգ.*

---

Ըզմարտ ցլուց տեսեալ գորտոյ 'ի լըճէ,
Աւա՜ղ, ասէ, որպիսի մեզ 'ի վերայ կան աղէտք:
Եւ ընդէ՞ր, ասէ ընկերն, ուր 'ի բացեայ կան 'ի մէնջ,
Եւ ըզնախրին պետութենէ վիճեալ եզինքդ ոգորին,
Ուր այլ է մեզ ազգ, և այլուր է դադար:
Այլ որ վանեալ, կըրկնէ միւսն, և փախիցէ յանտառէն,
Այր արդեօք հասցէ 'ի խորշըս լըճիս,
Կոխան ըզմեզ առնել կարծու կըճղակաւ.
Այսպէս նոցայն անկցի 'ի գլուխ մեր զայրոյթ:

## ԱՌԱԿ Լ.

## ՈՒՐՈՒՐ ԵՒ ԱՂԱՒՆԻՔ

*Տես յո վստահիս.*

---

Որ զանձն 'ի խնամս ամպարըշտին հաւատայ ,
Շահի զկորուստ իւր՝ փոխանակ փրկութեան ։
Աղաւնիք ըստէպ խուսեալ յուրուրէ ,
Ի թեւս թեթեւըս փրկէին մազապուր .
Ի նենգ ապա մըտաբերեաց յելուզակն ,
Այսպիսեաւ դաւով պատրեալ զազգն անզէն .
Դուք ընդէ՞ր երերական վարէք կեանս ,
Եւ ոչ , ասէ , զիս թագաւոր ընտրէք կռեալ ուխտ ընդ իս ,
Որ 'ի բնաւ արկածից կարեմ ըզձեզ առնել զերծ ։
Դիւրահաւանք ուրուրին եղեն նոքա անձնատուր .
Նորա կացեալ թագաւոր ,
Դըժնեայ մագլօք տէրէր նոցին՝ յօշյօշ ըզմին մի հերձեալ .
Յարբեցելոցն յայնժամ մին ասէ . Տանջիմք յիրաւի ։



# ՓԵԴՐՈՍԻ

# ԵՍՈՎՊԵԱՆ ԱՌԱԿԱՑՆ

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

---

### ՆԱԽԵՐԳԱՆՔ ՔԵՐԹՈՂԻՆ

Եսովպեան տարազ խօսից օրինակօք յօրինի․
Եւ զինչ այլ առակախօս խնդրիցէ,
Բայց զուղղութիւն մոլորութեան մահացուաց,
Եւ ըղձրաջան ճարտարութիւն հրահանգել։
Որ զինչ ապա առակարկուէին վիպեալ խաղ,
Թէ զուարճախառն իցէ միայն և 'ի նպատակ իւր 'ի ձահ,
Ի ինքնին իսկ գովելի և ոչ անուամբ վիպողին։
Զամենայն զուն գործեցից՝ չայլայլել զոճ ծերունւոյն․
Այլ թէ ուրեք հաճոյ թուեսցի յեռուլ ինչ,
Զի ձեւոց զանազանակք իցեն ախորժ լսելեաց,
Բարւոյ մասին, ո՛ ընթերցող, ընկալ զայն․
Զի շնորհապարտ այսպէս զլռոցի նորա հակիրճ պարզութիւն,
Որ ոչ երկայն ներբողենից է կարօտ։

## ԱՌԱԿ Ա.

### ԱՌԻԻԾ, ՈՐՍՈՐԴ ԵՒ ՈՒՂԵՒՈՐ

*Են և բարեմասնութեան մրցանակք.*

---

Ուսիր ընդէ՞ր պահանջողին զըլանալ,
Տալ համեստին պարտիս զոր ոչըն խընդրէ։
Առ զուարակաւ ըսպանելով կայր առիւծ.
Անդր և որսորդ հաս պահանջել իւր բաժին.
Առիւծն ասէ. Տայի արդեօք, եթէ քո չէր սովորեալ
Առնուլ քեզէն. և զապիրատըն մերժեաց։
Դէպ լեալ անմեղ ուղեւորի ումեք ընդ այն անցանել,
Ընկըրկեցաւ յետս 'ի տեսիլ գազանին.
Յայնժամ առիւծն ասէ ցընա հեզաբար.
Մի՛ երկընչիր, առ ըզբաժինդ համարձակ
Որ քում համեստ պատկառանացդ է ըմբոն.
Նա ըզշաղիղըն պատառեալ՝ եթող դիմեաց 'ի յանտառ,
Առ 'ի տեղի տալ նըմին։
Վէհ արդարև և գովելի օրինակ.
Սակայն կարօտ համեստութիւն, սակայն ագահն է փարթամ։

---

## ԱՌԱԿ Բ.

### ՊԱՌԱՒ, ԱՂՋԻԿ ԵՒ ԱՅՐ

*Նման զնմանն սիրէ.*

---

Խըրատիմք այսու առակաւ՝ զի 'ի կանանց, իբր և է,
Կապտին միշտ արք, թէպէտ սիրօղք թէպէտ իցեն սիրելիք։
Զայր միջահասակ կին մի ոչ ինչ անգեղեայ
Գրաւէր 'ի սէր, զամըն զարդուք ծածկելով.
Գերէր և միւս ամն ըզսիրտ նորին չըքնաղ օրիորդ.

Երկաքանչիւր առ 'ի նմանել սիրելւոյն,
Մերթ մին մերթ միւս խլէին ըղձերան ընտրանաւ:
Եւ 'ի կարծել զանձն 'ի խնամոց անտի կանանցն յարդարեալ,
Կնդակ 'ի գլուխ յանկարծակի գտանէր,
Օրէորդին արմատաքի զսպիտակս
Եւ պառաւոյն զսեաւս 'ի բաց կորզելով:

---

## ԱՌԱԿ Գ.

## ՄԱՐԴ ԵՒ ՇՈՒՆ

*Անպատժութիւն հրապոյրք 'ի մեղս.*

Ումն 'ի ժանեաց շան ամեհւոյ խածատեալ,
Եթաց յարիւն իւր հաց և արկ չարագործին զայն 'ի կեր,
Զի սպեղանի լուեալ էր գոլ զայն վիրին:
Յայնժամ Եսովպ ասաց նմա զայս 'ի խրատ.
Ըզգուշացիր, մի առաջի բազմութեան շանց առնել զայդ,
Զի կենդանեացն արդեօք ըզմեզ լափեսցեն,
Այդպիսի ընկալեալ վարձ եղեռան:
Յաջողուած ամպարշտաց զյոգունս ածէ 'ի հրապոյր:

---

## ԱՌԱԿ Դ.

## ԱՐԾՈՒԻ, ԿԱՏՈՒ ԵՒ ՎԱՐԱԶ

*Այր անձնաւոր չեղջակոյտ է չարեաց.*

Բարձր 'ի կատար կաղնոյ եդ բոյն իւր արծուի,
Եւ կատուի ծերպ ինչ 'ի բնի ծառոյն գտեալ' անդ ցնկնեաց.
Իսկ վարազ անտառաբնակ արկ ըզխոզքոյս առ արմին:
Յայնժամ կատուի այսպէս դաւով և անպարիշտ չարութեամբ
Ըզբարեդէպ երդակցութիւնն լուծեալ,

Ի բոյն հաւուն ել բանսարկեն՝ ասելով,
Կորուստ անշուշտ քեզ պատրաստի, գուցէ և ինձ իսկ հեքիս,
Զի ահա կինճդ այդ դաւաճան՝ որ բրէ զերկիր հանապազ՝
Նիւթէ զկաղնոյդ կործանումն,
Առ 'ի հեշտեաւ զորդիս մեր կորուսանել 'ի դիւրի :
Անդր ահագին արկեալ խուճապ, 'ի վայր ապա սողոսկի
Ի թաւաստև վարագուն որջ, և ասէ .
Ի վտանգի մեծի գտանեն որդիք քո,
Զի երբև այն ինչ դու ելցես ընդ մանկերամդ 'ի ճարակ,
Դարանի յափշտակել արծուի զկորիւնըս քոյին :
Ահիւ և զնա պակուցեալ, ել ապա
Թագեաւ 'ի ծերպ իւր նենգաժետն 'ի յամրի .
Գիշերախառն ելեալ անտի ծայրիւք թաթից 'ի խընդիր,
Եւ ճարակ իւր և իւրոցն հայթայթեալ,
Ըզգուշանայր ընտիւն ողջոյն կեղծեալ զահ :
Արծուին 'ի խէթ կործանման՝ նըստէր 'ի յոստս անդ անշարժ,
Եւ կինճ զիւրոցն ապշոպմանէ կասկածեալ՝
Նոցին 'ի պահ կայր անդ 'ի ներքս ամրափակ :
Զի՞ երկարեմ, իւրեանցայնովքն հանդերձ կորեան անսըւաղ,
Ճարակ կորեանց կատուոյն առատ ընձեռեալ :
Դիւրահաւան անմըտութիւն ուսցի սովին առակաւ,
Որքան չարիս նիւթէ յաճախ այր երկխօս :

---

## ԱՌԱԿ Ե.

## ԿԵՍԱՐ ԱՌ ՍՊԱՍԱՒՈՐՆ

*Մի՛ ինչ կարի.*

---

Սպասաւորաց ազգ ինչ ժրաջան է 'ի Հռովմ,
Որ շուարաբար ընթէպ այսր անդըր դիմէ,
Պարապորդ և բազմազբաղ՝ տարապարտուց հեւալով,
Գործօն և բնաւ իսկ անգործ,
Անձին տաղտուկ, և օտարաց անհընարին դըժպըհի .

Ըզնա խրատել ըղձանամ, եթէ միայն կարացից,
Արժանալուր և ստոյգ այսու առակաւ ։
Յորժամ յերկիր Նեապօլսոյ դէմ եդեալ կայսրն Տիբեր,
Ի Միսենոն եկն 'ի քաղաք իւր բնիկ,
Որ 'ի բարձուէ լերին՝ ուր կայ 'ի Լուկուլլեայ կառուցեալ՝
Յետուրեանըն մերձ 'ի ծով ակնարկէ,
Ի սիկուլեանըն դիտելով 'ի հեռուստ,
Ընդ մի ամն 'ի գօտէպլինդ ծառայից,
Այր պարեգօտ յուսն ամփոփեալ պելուսական կտաւով՝
Եւ 'ի կախ 'ի վերջաւորսն անկանէր,
Ի զգնալ տեառն ընդ բազմազուարճ դարաստանս՝
Փայտակերտ առեալ ցընցուղ ցօղէր զգետին տօթակէզ
Խուձապաւ մեծաւ 'ի գործըն դուզնաքեայ պարապեալ,
Ծաղըր կալով բոլորից ։
Ընդ ծանօթ ապա 'նդ պլտոյտըս պարտիզին շուրջ յածեալ,
Դեպի յայլ խորն ճեմելի ցածուցանել ըզփոշին ։
Ծանեաւ կեսար զայրն, և մըտաց նորին եղև իրազէկ.
Իսկ նա հըրճուէր, իմ իմիք ակընկալեալ՝ ոչ գիտեմ.
Զայնէ զնա տէրն. նա անդր ընդոստ հասանէ
Բարեգուշակ յուսով արդեօք ապտակին* ։
Յայնժամ այսպէս ծաղր ըզնովաւ իշխանն արար վեհափառ.
Ոչ ծանր ինչ գործ գործեցեր, և զուր վաստակ քո կորեաւ.
Յոյժ մեծագնի ապտակք առ իս վաճառին ։

* Սովորութիւն էր առ հռովմայեցիս 'ի նշան ազատութեան ստրկաց իւրեանց հանել նոցա ապտակ ։

## ԱՌԱԿ Զ·

## ԱՐԾԻՒ, ԱԳՌԱՒ ԵՒ ԿՐԻԱՅ

*Ի զօրութենէ որում օգնէ չարութիւն, ո՞ կարասցէ ապրել.*

---

Ընդդէմ բըռանց չիք բաւական ամրութիւն.
Իսկ թէ խրատատու եւս նոցին ոք խորամանկ մերձ կայցէ,
Զօրութիւն ընդ չարութեան աջակից
Ընդ իմ իմիք և մարտիցին՝ կործանի ։
Արծուոյ 'ի վեր յափշտակեալ զկրիայ,
Նա յեղջերեայ տանն զմարմին իւր ծածկեաց,
Անվնասելի անդ թագըստեամբն ամրացեալ ։
Մատեաւ ընդ օդս առ նա ագռաւ, և թռանելով առընթեր
Այո, ասէ, առեր մագլօք քոյին աւար պարարակ,
Այլ ծանրաբեռն խոնջեսցիս վայրապար,
Եթէ ոչ ցուցից քեզ զինչ պարտիս արդ խելըս խառնել ։
Եւ իբրեւ նա մասն յաւարէն խոստացաւ,
Խրատ ետ 'ի ժայռ յարփից բարձանց ընկենուլ,
Եւ զկարծրակուռ պատեան նորին ջաղջախել,
Զի 'ի փըշրելըն՝ առնուլ հեշտեաւ կարիցէ զայն 'ի ճարակ ։
Համոզեալ արծուին արար ըստ խրատուն,
Եւ առատ խրատատուին իւրում հան բաժին ։
Այսպէս այն՝ որ աներկիւղն էր 'ի բնէ,
Անկարող ընդդէմ երկուց դառըն մահուամբ կորնչէր ։

## ԱՌԱԿ Է·

### ՋՈՐԻՔ ԵՒ ԱԽԱՋԱԿՔ

*Մեծատանց վտանգ բազում.*

---

Ջորիք կրկին ծանրաբեռնք երթային.
Միոյն բարձեալ տանելով պարկս արծաթոյ,
Միւսումն քուրձս պատարունս գարւով:
Նա ճոխ 'ի բեռնըն բարձրավիզ սիգաճեմ,
Բոժոժ փայլուն տատանելով 'ի յուլան.
Իսկ սա անխռով համդարտաքայլ գայր ըզհետ:
Աւազակք յանկարծակի 'ի դարանաց յարձակին,
Եւ 'ի մարտի անդ ըզջորին վիրաւորեալ երկաթով,
Ըզդրամն յափրշտակեն՝ թողեալ զանարգ ըզգարին:
Արդ մինչդեռ նա կողոպտեալ զարկածս անձին աշխարէր,
Յիրաւի, ասէ միւսն, ընդ անարգանս իմ խընդամ,
Զի ոչինչ կորուսի և ոչ ըզվէրս ընկալեալ:
Այսպէս ահա աղքատութիւն աներկիւղ,
Եւ վտանգաւոր է բազմագանձ մեծութիւն:

---

## ԱՌԱԿ Ը·

### ԵՂՋԵՐՈՒ ԵՒ ԱՐՋԱՌՔ

*Առաւել տեսանես քեզէն քան 'ի ձեռն այլոց.*

---

Եղջերու հալածական 'ի թաւամուր անտառաց,
Խուսափեալ 'ի յորսողացըն մօտալուտ մահուանէ,
Այր ահիւ դիմեաց 'ի գիւղ մօտաւոր,
Եւ 'ի գոմ ուրեք անկաւ 'ի դիպան:
Եւ մինչ թաքչէրն անդանօր, ասէ արջառ. Եղո՛ւկ դու,

Զի՞ գործեցեր, քեզէն 'ի մահ ընթացար,
Ընդ յարկաւ մարդկան եղեալ անձնատուր ։
Իսկ նա աղերս արկեալ ասէ. Դուք ևեթ յիս թէ խնայէք,
Ժամ առեալ սրացայց դարձեալ 'ի փախուստ ։
Գիշեր տուընջեան յաջորդեալ,
Ընծէ մրջակըն տերև, և ոչ 'ի նա ակնարկէ.
Ներթևեկէն չինականք, ոչ ուրուք լեալ իրազեկ.
Գերդաստանիկն իսկ անցեալ, և չտեսանէ ինչ բնաւ ։
Յայնժամ հըրճուեալ երէոյն,
Շնորհակալիս մընջիկ եղանցըն կալաւ,
Զի՛ յերեսաց արկածիցն ապըրնջականք եղեն իւր ։
Պատասխանի ետ նմա մին 'ի նոցունց.
Ո՛ն և ո՛ն թէ ոչ քեզ կեալ ըղձանամք.
Այլ բազմաչեայն եթէ երբէք եկեսցէ,
Ի վտանգի մեծի լիցին կեանք քոյին ։
Մինչ այս մինչ այն, դառնայ ինքնին տէրն յընթրեաց,
Նա հիւծ զեզինսըն տեսեալ՝ մատչի 'ի մսուրն, և սաստէ.
Ընդ իմ՞ տերևք սակաւ, և չիք յարդ.
Իցէ՞ ինչ աշխատութիւն առնուլ զոստայնըս սարդի ։
Նա 'ի շուրջ յածել իւր յայց 'ի խընդիր,
Դիպեալ աչացըն բարձր եղջերք եղջերուին,
Տանի զաւարն, և տայ զենուլ ազգատոհմին 'ի կոչունս ։
Ազդէ առակս այս՝ զի յիւրում իւրաքանչիւր ոք 'ի տան
Է առաւել շըրջահայեաց և առաւել քաջատես ։

## ՎԵՐՋԱԲԱՆ ՔԵՐԹՈՂԻՆ

*Նախանձ ընկեր առաքինութեան.*

---

Հանճարոյն Եսովպայ արձան կանգնեաց Ատտիկէ ,
Ըզծառայն կառուցեալ յանմահական խարըսխի ,
Գիտել ընաւից զի բայց փառացն է ուղի ,
Եւ թէ պարծանք ոչ ազգի՝ այլ վաստակոց ընծային ։
Եւ զի չներէր նա ինձ լինել առաջին ,
Որ ինչ մնայրն ինձ ջանացայ՝ մի զնա թողուլ միայնակ ․
Ոչ առ մախանս՝ այլ՚ի սէր բարւոյն նախանձ բերելով ։
Եթէ զվաստակ իմ յարգեսցէ Լատին ,
Հանցէ յոգունս ընդդէմ Յունաց ՚ի ճակատ ․
Իսկ եթէ զջանս իմ եպերել կամիցի ,
Ըզգոլութեան վստահութիւն կապտել յինէն ոչ կարէ ։
Եթէ չիցէ երկս իմ զանխուլ առ ՚ի քէն ,
Եւ առակքս այսոքիկ ճարտարահիւսք քեզ թուիցին ,
Զամենայն կարճէ բողոք բախտն յինէն ։
Իսկ թէ ՚ի ձեռս այնոցիկ անկցի գրաւորս այս վաստակ ,
Զորս դըժխեմ երկնեալ բնութիւնած ՚ի լոյս ,
Որք խածատել եւեթ զընտիրս գիտեն ,
Անհրաժեշտ արկածիցն արիաբար համբերից
Մինչեւ բախտն ամաչեսցէ ՚նդ ոճիր իւր ։

# ՓԵԴՐՈՍԻ

# ԵՍՈՎՊԵԱՆ ԱՌԱԿԱՑՆ

## ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

---

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

**Փեդրոս առ Եւտիքոս.**

---

Ըզմատենիկըս Փեդրոսի եթէ ցանկաս ընթեռնուլ,
Պարտ է քեզ, Եւտիքէ, 'ի զբաղմանց պարապել,
Զի միտք ազատք լիցին տաղիցըս զօրութեան խելամուտ:
Այլ ասիցես. Իցէ՞ այդքան քեզ հանճար,
Զի և վայրկեան 'ի նոսին յերկոց իմոց կորուսից.
Ապա ընդէ՞ր առնուս 'ի ձեռըս քո զայն՝
Որ լըսելեաց ըզբաղելոց չէ ըմբռն:
Սակայն աւուրք ինչ պարապոյ գայցեն, թերևս ասիցես,
Որ անըզբօս քոյոց մըտաց հրաւէր յուսումն առնիցեն.

Արդ ասէ՝ մի թէ զփրցուն յայնժամ տամկս ընթերցցիս,
Թէ տառընկին իրաց տարցիս հոգ և խնամ,
Թէ ժամ տայցես բարեկամաց, թէ սփոփեսցիս վայրիկ մի.
Եւ հարսին քում կենակից թէ քեզ հանգիստ շնորհեսցես,
Որ ’ի բարուք ես ’ի լրումն օր ըստ օրէ վաստակոց:
Փոխեա զխորհուրդս քոյին, փոխեա զպայմանս կենաց քոց,
Ընդ սեամբս Մուսայից եթէ մտանել ըղձանաս:
Ես որ ’ի լեառն պիերեան եմ ծնեալ,
Ուր Իններեակ երբեմն երկամբք Մնեմոսին
Որոտողին Արամազդայ նուիրական
Զարուեստից եած ’ի լոյս ըզկաճառ,
Եւ որ ’ի նմին իսկ գոգցես ’ի վարժոցի ընծայեալ՝
Ի սպառ ’ի բաց ըզհոգ ընչից պարուրեցի ’ի սրտէս,
Բազում գովութեամբ յայս ազգ կենաց պարապել,
Սակայն հազիւ ’ի խումբ նոցին թէ գտանիմ,
Զինչ ապա որ մթերից զանձուց եղեալ հետամուտ,
Քան ըզվաստակ գրաւորական ըզքաղցր շահ մեծարէ:
Արդ իցէ այս որ ինչ էն, որպէս ասէրըն Սինոն,
Արքային Դարդանիոյ յորժամ ածաւն ’ի յատեան *:
Երրորդ ըզգիրս արարից քերեալ ’ի յոճ եսովպեան,
Փառացդ ըզսա և վաստակոց ուղերձեալ.
Զոր թէ ’նթերցցիս, ուրախ եղէց. իսկ թէ ոչ,
Արդեօք յետինք ’ի սմա զբօսանս ինչ գտցեն:
Հակիրճ այժմիկ ուսուցից առ ինչ հնարեալ առասպելք.
Զի ստրկութիւն հըպատակ չիշխէր ասել զոր կամէրն,
Յառակս ըզկիրս իւր յայտնեաց,
Որ ’ի մերժել կեղծեօք խաղուց ըզբամբուր:
Անցաներիւր ընդ Եսովպայն երթեալ և իմ ընդ ուղի,
Հանձարեցի առաւել քան ըզթողեալն ’ի նմանէ,
Պատկանաւոր ինչ ինչ առ կիրս իմ ընտրեալ:
Թէ դատախազ այլ ոք էր ինձ, ոչ Սէան.

* Ակնարկէ ’ի խօսս Սինոնի, որ գերի ածեալ ’ի Տրովացւոց առաջի Պրիամու արքայի (Վիրգ. Են. Բ. 77.) զայս օրինակ սկսաւ խօսել, որ երբէք յառակս լեալ առ հռոմայեցիս:

Եթէ վկայ այլ ոք, և այլ դատաւոր.
Համարէի զիս եղեռանցըն դըժնէից պարտաւոր,
Եւ ոչ սոլին ըսպեղանեաւ առնուի զվէրս իմ մեղմել:
Իսկ թէ վրիպակ ոք 'ի կասկած՝ անձին կալցի առացեալ
Որ ինչ ընաւից առ հասարակ է 'ի խորատ,
Ըզխիղճ մըտացն անմըտաբար մերկացի.
Սակայն հայցեմ 'ի նմանէ մի մեղադիր լինել ինձ,
Զի չէն ինձ կամք յանդիմանել զոք երբէք,
Բայց ըզկենցաղ բոլորից և զքարս ուղղել անխըտիր:
Ծանր ինչ 'ի յանձն առեալ պաշտօն թերևս ինձ ոք ասիցէ.
Թէ սկիւթացին Անաքարսիս եթէ Եսովպ փռիւգացին
Հանճարով իւրեանց անմահ անուն կանգնել կարացին,
Ինձ որ մերձ եւս եմ վիճակեալ զիմաստունն Ելլադայ,
Ընդէր անգործ կալ 'ի քուն,
Ընդէր ապախտ առնել ըզփառս հայրենեաց.
Ուր թրակացին ազգ 'ի համար զիւրսն արկանէ ըզքերթօղս,
Եւ Լինոսի թէ Ապողոն է ծնող, Մուսա Որփէի
Որ զապառաժս երգով շարժեաց, նուաճեաց նուագօք ըզգազանս,
Եւ հեղիկ նահանջմամբ ոտնակառեաց զուխս Հեբրեայ:
Ո՜ն ապա մի ընդ վայր հեծեր, ո՜ն անդր 'ի բաց կաց նախանձ.
Զի վայելուչ օրինաւորն է ինձ փառք:
Յընթերցուածն ըզքեզ ցայս վայր յորդորեալ,
Զանկեղծդ ինձ արդ մաղթեմ շնորհել դատաստան
Ընդելական քոյին ծանօթ պարզութեամբ:

## ԱՌԱԿ Ա.

### ՊԱՌԱՒ ԱՌ ՍԱՓՈՐՆ

*Հետք իսկ բարեաց են ախորժելիք.*

---

Անկեալ դատարկ ետես պառաւ ըզսափոր,
Որ փալեռնեան գեռ մըրրով յազնըւագործ ապակեայն
Անուշահոտ սփռէր բուրումն 'ի բացեայ.
Զոր լի ռընգամբք անյագաբար հոտոտեալ,
Ո՜վ սիւք անոյշ, ասէ, և զի՞նչ 'ի քեզ երբեմըն կըրեալ,
Ոյր այսպիսիք են մնացորդք:
Ի ծանօթիւն իմոց ոչինչ զանխուլ են միտք առակիս:

---

## ԱՌԱԿ Բ.

### ՅՈՎԱԶ ԵՒ ՀՈՎԻՒ

*Բարերարն ընկալցի բարիս.*

---

Յաճախ և նուաստք կըշռեն տրիտուր հաւասար:
Ի գբի ուրեք տեսին գեղջուկք անկեալ զյովազ անխոհեմ,
Կէսք վիրգս 'ի նա հոսէին, կէսք տեղային վէմս 'ի վայր.
Իսկ այլք շարժեալ 'ի գորով՝ այնմ որ ինքնին 'ի կորուստ
Առանց ուրուք իսկ վնասելոյ հասեալ կայր,
Ընկենուին նըմա հաց՝ առնուլ նովաւ զօրութիւն:
Եհաս գիշեր, չոգան յիւրեանըս վըստահք
Ի վաղիւ անդր ըզնա գտանել դիտապաստ:
Այլ նորա ընդ կազդուրել ըզկըթուցեալըն կորով,
Ընդոստ 'ի գբոյն վազեալ անկաւ 'ի խըշտին:
Ոչ յետ բազմաց ինչ աւուրց,
Սրանայ և զխաշնըն պատառէ սատակելով ըզհովիւս.

Եւ ամենայն ուրեք աւեր գործեալ մոլի զայրագին ։
Յայնժամ զանձնէ 'ի կասկած ոյց 'ի գազանն էր խնայեալ,
Ըզտոյժ 'ի յանձն առնուն՝ միայն վասըն կենաց պաղատին ։
Այլ նա ասէ․ Յիշեմ քաջ, որք յիս եղեն քարաձիգ,
Եւ որք ինձ հաց ետուն․ դուք մի՛ երկընչիք ․
Նոցին հասեալ կամ Թըշնամի որոց 'ի յիսըն մեղան ։

---

## ԱՌԱԿ Դ․

### ԳԼՈՒԽ ԿԱՊԿԻ

*Հայեաց 'ի սիրտ և մի' յերեսս.*

Ի խոհանոց ուրեք կախեալ ըզկապիկ
Տեսեալ ուրուք ընդ այլ վաճառս և ընդ խահ,
Եհարց թէ զինչ ունէր համ։ Յայնժամ խոհկերն ընդ կատակ․
Որպիսի ինչ է գլուխն, ասէ, նոյն ընծայի մարմնոյն համ։
Զայս ընդ խաղ համարիմ քան թէ ստուգիւ ասացեալ,
Զի զգեղանիս տեսի յաճախ ժանտաժուտ,
Եւ բարեւաւ ըզճառադեմս բազում ։

---

## ԱՌԱԿ Ե․

### ԵՍՈՎՊ ԵՒ ՍՏԱՀԱԿ

*Հատուցանել վրէժս 'ի ժամանակի ժպիրհ յանդգնութիւն.*

Յաջողութիւն զյոգունս 'ի վնաս հրապուրէ ։
Ոմն ըստահակ եհար քարամբ զԵսովպոս․
Իսկ նա՝ Կեցցես, ասէ․ տուեալ նըմա դանկ,
Եւ յաւելու․ Աւելի ինչ ոչ ունիմ,
Բայց ուսուցից ուստի քեզ մարթ է առնուլ․

Ահա հըզօր ոք և փարթամ հասեալ գայ,
Իջնա նոյնպէս հար քարև.
Եւ զարժանին ընդունիցիս փոխարէն:
Հաւանեցաւ նա և արար ըստ խրատուն,
Այլ ըզժըպիրհ յանդըգնութիւն պատրեաց յոյս.
Քանզի ածեալ 'ի պատուհաս կախաղանաւ ետ վըրէժ:

---

## ԱՌԱԿ Զ.

### ՃԱՆՃ ԵՒ ՋՈՐԻ

*Ծաղրելի է տկարաց խրոխտումն.*

Ճանճ 'ի քեղւոջ բազմեալ կառաց և կըշտամբէր ըզջորի.
Քանի դանդաղ ես, ընդէ՞ր արագագոյն ոչ գընաս,
Տես զուցէ զուլըն քո չիթել խայթիւս իմով հարկեցայց:
Իսկ նա ասէ. Ոչ 'ի բանից քոց շարժիմ,
Այլ յայնմանէ երկուցեալ՝ որ յաթոռակըն բազմի
Ճապուկ խարազանաւ կառավարել ըզլուծ իմ,
Զերասանակըն փըրփըրերախ սանձիւք կալեալ պինդ 'ի բերն.
Թող անդր 'ի բաց զյանդըգնութիւն քո մնոտի,
Գիտեմ իսկ ուր ըզկայ առնուլ և ուր իջէ ընթանալ:
Արժանապէս ծաղրէ առակս ըզնոսա,
Որ առանց ինչ քաջութեան առնեն 'ի զուր սպառնալիս:

## ԱՌԱԿ Է.

## ՇՈՒՆ ԵՒ ԳԱՅԼ

*Երջանիկ է աղքատ ազատ քան զծառայ մեծատուն.*

---

Թէ քանիօն ազատութիւն ցանկալի,
Ցուցից զայն համառօտիւ աստանօր :
Շ՝ան գիրացելոյ պատահէ գայլ նիհարեալ.
Եւ ողջունեալ ըզմիմեանս իբրև կացին, ասէ գայլ.
Ի՞բր աղէ դու այդքան գտանիս յօրացեալ,
Եւ որո՞վք խորտկօք իրամ քեզ արարեր այդպիսի,
Զի սովամահ ես կորընչիմ որ քան ըզքեզդ եմ հըզօր :
Պատասխանեաց նա պարզօրէն. Ն՝ոյն հասանէ և քեզ բախտ,
Թէ զնոյն պաշտօն յանձն առնուցուս հարկանել:
Զո՞ր. ասէ նա: — Զի պահակեր լիցիս զրան,
Եւ գիշերի 'ի գողոց պահպանեսցես զապարանս: —
Աղքատիկ կամ, արդէն ընդ ձիւն արդէն ընդ բուք մաքառիմ,
Դըժընդակ վարեալ կենցաղ 'ի յանտառս,
Քանիօն ինձ դիւրագոյն լիցի բնակել ընդ յարկաւ,
Եւ պարապորդ յագել առատ կերակրով: —
Աղէ ապա եկ դու ընդ իս, յաւել շուն :
Բայց գայլ 'ի գնալըն տեսեալ ըզպարանոց ուղեկցին,
Զի էր մաշտեալ 'ի շըղթայէն, հարցանէ.
Ար ի՞նչ է այդ, բարեկամ: Ոչ ինչ ընաւին, ասէ շուն:
Կըրկնէ դարձեալ գայլ. Այլ ասա աղաչեմ: —
Զի ամէհի թըւիմ, կապեն զիս ցերեակ.
Հանգչիմ 'ի տուէ, հըսկել 'ի գալ գիշերոյ.
Եւ ընդ երեկս արձակեալ շըրջիմ ուր կամք և իցեն.
Ինքնին ինձ գայ նըկանակ,
Ի սեղանոյ իւրմէ ինձ տէրն իմ ընձեռէ ոսկրոտի.
Ընկենուն և ընտանիք ինձ պատառս,
Եւ զանախորժն այլոց քաքար 'ի ճաշակ.

Այսպէս անջան փոր իմ լըցեալ յագենայ : —
Իսկ թէ ուրեք կամք իցեն գնալ, աղէ աստ, գո՛յ հրաման :
Բնաւին ոչ, ասէ շուն : Յայնժամ ընկերըն կըրկնէ .
Վայելեսջիր քեզէն, ո՛վ շուն, յոր գովեսդ .
Թագաւորել իսկ ոչ կամիմ, եթէ չիցեմ ինքնիշխան :

---

## ԱՌԱԿ Ը.

## ԵՂԲԱՅՐ ԵՒ ՔՈՅՐ

*Գեղեցիկ այն է որ բարին է.*

Պատուիրանաւըն խրատեալ՝ ըստէպ քըններա զանձըն քո :
Ումեմն էր դուստր անգեղեայ, եւ վայելուչ ուստր 'ի գեղ.
Սոքա 'ստ ղխպաց 'ի հայելւոջ, որ 'ի բազմոց մօրըն կայր,
Տեսին ըզդէմըն մանկաբար խաղալով :
Պանծայր որդին ընդ գեղ իւր, աղջիկն ընդ այն զայրանայր
Եւ ոչ կարէր խրոխտացելոյ խաղուց եղբօրն հանդուրժել,
Յարհամարհանս՝ որպէս եւ էրն իսկ՝ զամենայն վարկուցեալ :
Առ հայրն ապա ընթացաւ առնուլ վըրէժ 'ի նմանէ,
Ոձիր մեծ չարախօսեալ զեղբօրէն,
Զի այր գոլով 'ի կնօջական խառնէր յիրս :
Նա գիրկս արկեալ համբոյր տըւեալ երկոցուն,
Եւ զանուշակ սէրըն յերկոսին բաժանեալ,
Կամիմ, ասէ, զի դիտեսջիք 'ի հայելւոջ միշտ ըզձեզ.
Դու զի մի զգեղ քոյին չարեաց եղծանիցես արատօք,
Իսկ դու զի քոց կերպարանաց բարի բարուքդ յաղթեսցես :

## ԱՌԱԿ Թ.

## ՍՈԿՐԱՏ ԶԲԱՐԵԿԱՄԱՑ

*Զայր հաւատարիմ ո՞ր գտանիցես.*

---

Յոգունք կոչին բարեկամք, բայց ճշմարիտք են սակաւք ։
Կառուցանէր իւր տուն փոքրիկ Սոկրատէս.
(Յորր մահուանէն ոչ խորշիմ եթէ հասից համբաւոյն,
Եւ տամ տեղի նախանձու
Թէ զերծ միայն անտի աճիւն իմ գտցի.)
Ոչ գիտեմ ո՞ յամբոխէն, որպէս յաճախ պատահէ,
Ձայն եբարձ. Ըզէ դու այրդ այդպիսի
Ո՞յդքան անձուկ կառուցանես քեզ տընակ ։
Պատասխանի ետ Սոկրատէս. Երանի
Թէ ճշմարիտ բարեկամօք լըցցի դա ։

---

## ԱՌԱԿ Ժ.

## ԱՌԱԿԱԽՕՍՆ ԶԴԻԻՐԱՀԱԻԱՆՈՒԹԵՆԷ

*Մի՛ լինիր դիւրահաւան, մանաւանդ չարախօսի.*

---

Ի՛ վտանգաւոր հաւատալ, ըզնոյն և ոչ հաւատալ.
Օ՛ երկոցունցն իսկ օրինակ համառօտիւ ցուցից աստ ։
Իպպոլիտ ոչ մեռանէր,
Թէ չէր մօրուի նորին հաւատս ընծայեալ.
Իսկ Իլիոն անկաւ, չեղեալ հաւատարիմ Կասանդրէ ։
Մինչև ապա վրիպեալ մըտաց 'ի չարաչար ինչ դատել,
Պարտին լինել ճշմարտութեանն հետազօտ ։
Ո՞չ զի մի՛ զբանքս առասպելեալ հնութեամբ անզօր արարից,
Պատմեմ որ ինչ արկածք յաւուրս իմ դիպան ։

Այր ում ըղձին իւր կաթոգին յոյժ սիրէր,
Ըզպատմուճան սոսկական վաղ խոկ կազմեալ որդեկին.
Ըզաստագիր իւր ած ըղձա առանձին,
Այն որ յուսայր ժառանգութեանն յաջորդել,
Եւ զմանկանէն չարախօսեալ բազում ինչ,
Եւ զողջախոհ հարսնէն եղբարն բազում,
Յաւել և զայն յոյժ վըշտալի փեսային,
Իբր այն թէ սաէպ սիղեխ առ նա յաճախէր,
Ըզհամբաւ տանն անարգելով ժանտ չնութեամբ:
Սրտմտեցաւ այրն ընդ հարսին իւրոյ ուժիր սրտայօգ,
Եւ 'ի գիւղ ուղևորել պատճառեալ,
Գնաց 'ի շինի անդ ագաւ:
Գիշերայն ապա 'ի ներքըս փութապէս մըտանէր,
Ընդր 'ի սենեակըն դէպ ուղիղ դիմելով,
Յոր պատուիրեալ էր մօրն առ իւր 'ի քուն լինել որդեկին,
Զարգուն տիոցն ունելով պահ ըզգուշեաւ:
Ճըրագ խընդրի, և մինչ այսր անդր երթևեկէն ընտանիք,
Նա զմոլեգին սըրտմըտութեան ոչ կարելով բերել թափ,
Յառաջաստ անդըր մատչի, խընդրէ 'ի մթան առ խարխափ,
Եւ 'ի գտանել ըզգլուխ գերծեալ*, մըխէ 'ի սիրտ նորին սուր,
Ոչ յայլ ինչ ուշ ունելով՝ բայց 'ի վրիժուցն 'ի յագուրդ:
Լոյս ածաւ, և 'ի տեսիլ որդեկին
Ուանպարտական հարսին իւրոյ՝ որ 'ի մահիճս անդ ննջէր
Ի նիրհ նախկին լեալ աղխտիցն անըզգայ,
Զեղեամն հատոյց 'ի ծոց իւր ըզվրէժ,
Ըզուսերանն անկեալ երթեալ զիւրովին,
Զոր կասկած դիւրահաւան էր չկահեալ:
Դատախազք ընդդէմ կնոջըն յարեան,
Հարիւրապետք ըզնա 'ի Հռովմ կոչեցին.
Ընկաւ կասկած չար 'ի վերայ արդարոյն,
Իբր այն թէ զգոյս առնըն խընդրեալ ժառանգել:
Կան փաստաբանք յատենի

* Զի առ հռոմայեցիս հաւելոցն 'ի չափ գերծեալ էին գլուխք:

Ջատագովել ուժգին ըզդատ անմեղին .
Ըզքաջ արանցն յայնժամ զԱւգոստ աղերսէին դատաւորք ,
Օժանդակել անդրուժ յերդմանըն կալոյ *,
Զի զեզերանցն 'ի տարակոյս էին ինքեանք պաշարեալ :
Իբրև հերքեաւ զըրպարտութեանըն խաւար ,
Եւ ընիկ աղբիւր ճըշմարտութեան ել 'ի վեր ,
Տուծցէ վըրէժս ազատագիրն , ասէ , չարեացըն պատճառ ,
Զի զայրն անզաւակեալ և զկինն այրի 'ի յառնէն
Ողորմութեան քան թէ պատժոյ արժանաւոր համարիմ .
Զի զոճիրն անխծապարտ թէ տանուտեառն էր քըննեալ
Եւ ըզսըրտութիւնն հետազօտեալ ճըշգըրտիւ ,
Ոչ 'ի հիմանց ժանտ եղեռամբըն տուն նորին տապալէր :
Մի՛ ինչ ունէր արհամարհեալ մերժեսցէ ,
Մի՛ և հաւատս ընծայեսցէ խուլ և խուլ .
Զի գտանին մեղապարտք զորըս ընաւին ոչ կարծես ,
Եւ անմեղք տարապարտուց դատափետք :
Այս և 'ի խորատ միամըտաց գայ 'ի ձահ ,
Մի՛ օտարին կարծեօք առնել դատաստան .
Զի փառամոլ ըմբոստութիւն մահացուայ
Ատելութեամբ կամ ըստ հաճոյս իւր վըճռէ .
Ըզնա ծանօթ կալ զոր քեզէն ճանաչես :
Զայս ճոխաբար վասն այնորիկ ճառեցի ,
Զի կարի համառօտիւ գտանիմք ոմանց անհաճոյ :

* Քանզի երդումն էր դատաւորաց առնելոյ զիրաւունս :

## ԱՌԱԿ ԺԲ.

## ՎԱՌԵԱԿ ԱՌ ՄԱՐԳԱՐԻՏՆ

*Բազում այն է զի արհամարհի պատուականն.*

---

Ի խնդիր բրոյ վառեակ 'ի յաղբևս
Յանկարծ գտեալ մարգարիտ,
Ո՛վ մեծդ, ասէ, և պատուական, անկեալ յանարգ 'ի տեղւոջ.
Թէ որ յարգի քում տարփաւոր քեզ ատանօր հանդիպէր,
Յառաջին պայծառութիւնդ այնուհետև դառնայիր.
Իսկ իմ գտանել ըզքեզ, որ զբուտ յոյժ առաւել մեծարեմ,
Ոչ քեզ օգնէ ամենևին և ոչ ինձ։
Զայս այնոցիկ վիպեմ որ չեն հասու իմոց իմաստից։

---

## ԱՌԱԿ ԺԳ.

## ՄԵՂՈՒՔ, ԲՈՌՔ ԵՒ ՊԻԾԱԿ

*Արուեստաւորն 'ի գործոյ անտի ճանաչի.*

---

Բարձր 'ի կաղնոջ կազմեալ խորիսխս էր մեղուաց,
Իսկ ծոյլ բոռոց սեփականեալ իւրեանց զայն։
Դատն 'ի յատեան ձըգեցաւ, բազմէր պիծակ դատաւոր։
Որ զի քաջ ճանաչէր զազգս երկոսին,
Երկաքանչիւր զայս առաջի եդ օրէնս.
Ոչ աննըմանք էք իրմաւ, երանգդ իսկ ձեր է հանգոյն,
Մինչև յերկբայս յիրաւի ճշմարտութեան անկանել.
Բայց զի մի արդարութիւնս իմ՝ յանկարծ
Յանցանիցէ յանդըգնաբար 'ի դատել,
Բուէք փեթակ, և 'ի բըջիջս անդ ըզվաստակ ձեր հեղէք,
Զի մեղերն 'ի համոյ և 'ի ձևոյ խորըսխին

Ճարտարապետք յայտնեսցին ։
Զընկալան բոռք ըզպայմանն, հաճոյ եղև այն մեղուաց ․
Յայնժամ պիծակ ած ըզնոքօք դատաւճիռք ․
Ի յայտ եկին ապիկարք, և ոյք մեղերըն գործօնք ․
Մեղուացն ապա արդիւնք իւրեանց հաստուսցին ։
Լըռութեամբ անցանէի զայս առակ ,
Թէ չէր բոռոց 'ի պայմանէն հրաժարեալ ։

---

## ԱՌԱԿ ԺԴ.

### ԵՍՈՎՊ Ի ԽԱՂԻ

*Հանգիր զի աշխատեսցիս .*

Ատտիկեցւոյ ուրուք տեսեալ զԵսովպոս
Զի 'ի մանկանց երամ խաղայր ընկուզօք ,
Ըզկայ եւս ծաղրելով իբր ընդ անկեալ 'ի խելաց ․
Զոր ըզգացեալ ծերունւոյն ,
Որում վայել էր ծաղրել, քան թէ լինել ծաղր այլոց ,
Ըզթուլացեալ աղեղն 'ի մէջ արկ ուղւոյն ,
Իմաստունդ, ասելով, եկ դու մեկնեա զոր առնեմս ։
Երթևեկէր անդ ամբոխ, նա տաժանեալ ընդ երկար ,
Եւ 'ի չկարելն առաջարկեալ խնդրոյն լինել խելամուտ ,
Ըզպարտութիւն յանձն էառ ։
Յայնժամ յաւէլ իմաստասէրն յաղթական ․
Վաղ խորտակի որ միշտ լարեալ կայ աղեղն ,
Իսկ եթէ թուլ կալցիս զայն ,
Լիցի քեզ երբ և կամիցիս պիտանի ։
Այսպէս երբեմն և մտաց պարտ է շնորհել ըզզբօսանս ,
Զի հզօրագոյն անդրէն դարձցի 'ի խորհել ․

## ԱՌԱԿ ԺԵ.

## ՇՈՒՆ ԵՒ ԳԱՌՆ

*Որ դաստիարակէն կայր առաւել է քան որ ծնանին.*

---

Գառն 'ի հօրանս այծից մինչ կայր բառաչէր,
Անմիտ, ասէ նմա շուն,
Մոլորիս, չէ աստանօր մայր քոյին.
Եւ զոչխարսն ցուցանէ 'ի բացեայ:
Գառնիկն ասէ. Ոչ զայն խնդրեմ, որ երբ կամի յղանայ,
Եւ զանծանօթ բեռնըն զամիսս ինչ կըրեալ,
Ապա վիժէ ընկենու.
Այլ ըզնա' որ սնուցանէ զիս ըստեամբք,
Զըրկեալ զորդիսն 'ի կաթանէ զի նուազեսցէ մի ինձ այն:
Շունն յաւել. Այլ առաւել է որ ծընաւն ըզքեզ մայր:
Գառնիկն ասէ. Ոչ այդպէս,
Ուստի՞ գիտէր եթէ սպիտակ իցեմ թէ սեաւ ծնանելոյ.
Այլ համարեա թէ գիտէր.
Շնորհ ապաքէն արար ինձ մեծ այնու զի ծնաւ զիս արու,
Զի սպանողին ժամ 'ի ժամէ սպասեցից:
Եւ ընդէ՞ր որ 'ի ծնանելըն զիս չունի ինչ վաստակ,
Առաւել իցէ քան զայն' որ ողորմեալ անկելոյս
Ինձ ըզգորով իւր անուշակ մատուցանէ մրտադիւր:
Բարութիւնն առնէ ծընօղ, ոչ թէ հարկ:
Ուսուցանէ քերթողն այսու առակաւ,
Զի դըժկամակք օրինաց բնաւորապէս են մարդիկ,
Յօժարագոյնք յոյժ յորդորեալ 'ի յարդեանց:

## ԱՌԱԿ ԺԶ·

## ՃՊՈՒՌՆ ԵՒ ՋՂՋԻԿԱՆ

*Հաճոյագոյն և անվտանգ է մարդասիրութիւն.*

---

Կրէ զպատիժ խրոխտամտացն, որ անսաստէ քաղցրութեան։
Դժոխըմբեր առ ջղջիկն առնէր Ճըպուռն աղաղակ,
Այնմ որ սովոր է նըսեմաւ հետապօտել ըղձարակ,
Եւ 'ի փապար ստոյ նիրհել ըզցերեակ։
Աղաչեալ 'ի լռութիւն, ինքն ուժգնագոյն ճռընչէր.
Վերըստին թախանձանօք եւս առաւել զայրացաւ։
Տեսեալ ջղջկան զի չօգնէր ինչ արհամարհեալ աղերս իւր,
Խաբկանօք ընդ մըշտաձայնչըն վարեցաւ և ասէ.
«Քանզի չներեն ինձ դայլայլիկք քոյին փակել զաչս 'ի նինջ,
Յապոլոնի քնարէն գոգցես հընչեցեալք,
Յանկամ ըմպել ըզնեկտար՝ զոր ետ այժմիկ ինձ Պալլաս.
Ի միասին եկ արբցուք, եթէ իցէ քեզ հաճոյ։
Պապքեալ Ճըպուռն, 'ի լուր ձայնին ներբողի
Սլացաւ առ նա տենչանօք. իսկ նա ելեալ 'ի ծերպէն,
Հաս ըզնովաւ մինչ սասանեալ կայր նա, և արկ յարեւէ։
Այսպէս հատոյց նա մահուամբ, զոր կենդանւոյն էր ժըխտեալ։

## ԱՌԱԿ ԺԷ·

### ԾԱՌՔ ԸՆԴ ԴԻՑՆ ԽՆԱՄՈՎՔ

*Մի՛ վասն տերևոց զծառն յարգեր, այլ վասն պտղոյն.*

---

Երբեմն ըղձառս ընդ հովանեաւ իւրեանց դիք
Ընտրեցին իւրաքանչիւր ըստ կամի.
Կաղնին Դիայ և մըրտենին հաճոյ եղև Աստղկան,
Փեբեայ դափնին, սօճ Կիբեբեայ, Հերակլի վեհ կաղամախ:
Ի զարմանալ Աթենասայ թէ հիմ զամուլս ընտրէին,
Ըզվասնէրն եցոյց նըմա Արամազդ,
Զի մի թուեսցին գնել մըրգովք ըզպատիւ:
Բայց Աթենաս. Կալցի, ասէ, ո՛ն և ո՛ն,
Որպէս ինչ ոք ախորժէ.
Նոյն մըրգաբերն ինձ ձիթենի է հաճոյ:
Յայնժամ յաւել հայրն անմահից և ծնօղ բոլոր մահացուաց.
Ով վայրապար իմաստուհի կոչիս դու, դուստր, 'ի բնաւից,
Զի անհանճար են պարծանք,
Եթէ ոչ որ ինչ առնեմքն իցէ իմիք պիտանի:
Խրատէ առակս այս մի գործել ինչ յումպէտ:

---

## ԱՌԱԿ ԺԸ·

### ՍԻՐԱՄԱՐԳ ԱՌ ՀԵՐԱ

*Քոյովքդ շատացեալ՝ մի՛ իւրաց օտարին ցանկանայցես.*

---

Սիրամարգի բողոք բարձեալ առ Հերա,
Թէ էր ինքեան չէ շնորհեալ ըզսոխակին դայլայլիկ,
Իւ նա բնաւից նախանձելի լեալ հաւուց,
Իսկ ինքն հաղիւ ձայն արկեալ՝ լինի հանուրց ծաղրելի:
Առ 'ի սփոփել ըզնա ասաց դիցուհին.

Սակայն գեղով դու յաղթես, յաղթես քոյին մեծութեամբ.
Փայլ 'ի յուլան քում զմրըխտոյ նըշողէ,
Եւ 'ի փետուրս երփներանգ
Զականակուռ ըղբակ տըտան քո պարզես ։
Զի՞ բնաւ պիտոյ է ինձ, ասէ, համր և անխօս կերպարան,
Որ 'ի ստորև կամ ձայնիւ ։
Յաւել յայնժամ դիցուհին.
Բախտին կամօք այդպէս բաժինք ձեզ տըւան,
Քեզ գեղ, արծուոյ զօրութիւն, գուշակութիւն ագռաւու,
Սոխակի երգ, հըմայք գուժկանք եղջերկի.
Եւ գոհ ընդ իւրն իւրաքանչիւր է ընդ ձիր ։
Մ՚ի ըղձանար այնմ որ չիցէ քեզ տըւեալ,
Զի մի պատրեալ յոյս քո լուծցի 'ի տըրտունջ ։

---

## ԱՌԱԿ ԺԹ.

## ԵՍՈՎՊ ԱՌ ԼԵԶՈՒԱԳԱՐ

*Բազումք անուամբ, այլ ոչ արդեամբք մարդ.*

---

Եսովպայ ոչ ով գոլով ծառայակից առ տընին,
Հրամայեցաւ 'ի տեառնէն վաղ պատրաստել իւր ընթրիս.
Արդ 'ի խընդիր հըրոյ ընդ տունս ինչ շըրջեալ,
Եգիտ ուրեմն, և ըզլապտեր իւր վառեաց ։
Ապա 'ի յածելն աստ և անդ՝ երկայնելով յոյժ զուղին,
Մինչ համառօտ ընդ հրապարակն առնէր դարձ,
Ընդ լեզուագար ոմն յամբոխէն եկ ընդ առաջ և ասէ.
Եսովպէ, զի՞ զմիջաւուրբ խընդրես լապտեր 'ի ձեռին ։
Ըզմարդ խընդրեմ, ասաց և ետ ճեպ 'ի տուն ։
Թէ զըժպըհին այն ուշ ունէր՝ իմանայր,
Զի ծերունւոյն ոչ թըւեցաւ ինքըն մարդ,
Որ զըզբաղեալն 'ի գործ ծաղրէր տարաժամ ։

# ՎԵՐՋԱԲԱՆ ՔԵՐԹՈՂԻՆ

*Բազումս օգնէ որ երագէ յօգնութիւն .*

---

Ունել ունիմ բազում այլ ևս ինչ 'ի գրել,
Սակայն խնայեմ կամակար զի մի տաղտուկ քեզ թուեցայց,
Որ պաշարեալ 'ի յոլովից կաս զանազան ըզբաղմանց .
Եւ զի դարձեալ թէ ոք 'ի նոյն թեւակոխել կամիցի,
Կարող իցէ գտանել և իւր ինչ մնացորդ.
Թէպէտ այնքան առատութիւն է նիւթոյ,
Զի երկոց նուազէ ճարտար, ոչ երբէք երկ ճարտարի:
Խոստացար հատուցանել վարձ ճըշդութեանըս մերում,
Կացո ըզբան քոյին, աղերս արկանեմ.
Զի մերձագոյն օր ըստ օրէ պատահէն կեանք մեր մահու,
Եւ պարգև քոյին նըւազ ինձ գտանիցի պիտանի,
Որչափ յոլով ժամանակ յամել քոյին ծախեսցէ:
Երկայնագոյն լիցին վայելք, թէ վաղագոյն վըճարես.
Եթէ փութով ընկալայց, ժառանգեցից ընդ երկար:
Կրթուցելոյ հասակիս մինչդեռ մընայ ինչ նըշխար,
Կայ սմա տեղի օգնութեան .
Ըպլիկարիս զառամելոյ 'ի զուր ապա ճըգնեսցի
Բարեսէր քոյին կամացդ յօժարութիւն 'ի նպաստել,
Յորժամ ոչ ևս ինչ օգտեսցեն երախտիք,
Եւ մատուցեալ պահանջեսցէ մահ ըզհարկ:
Ընմըտութիւն համարիմ բիւրիցս ըզքեզ աղերսել,
Ինքնայորդոր սիրտ քո 'ի գութ բնաւորեալ.
Թէ ստէպ եգիտ թողութիւն խոստովանեալ պարտաւոր,
Քանիո՞ն իրաւացի շնորհել ըզնոյն անմեղին:
Քեզ այժմ է անկ՝ այն որ յառաջ այլոցն էր.
Նովին ապա շըրջանաւ հասցէ այլոց ոմանց կարգ.
Սահմանեա որ ինչ կըրօնք որ ինչ ներեն քեզ հաւատք,
Եւ տուր ինձ օ՛ն դատաստանաւ քով բերկրել:

Ընդ սահմանն առաջարկեալ վազեալ ելին միտք 'ի բաց.
Զի դըժուարաւ նուաճի հոգի յանմեղութիւն իւր վըստահ,
Եւ նեղեալ յեղեռնաւոր խեռութեանց:
Ըզվըճիռն ուսեալ 'ի տիս մանկութեան,
Թէ վտանգ ռամկին է քըրթմընջել յայտնապէս*,
Վայելուչ արկեց 'ի յուշ յառողջութիւն կազդուրեալ:

* Եննիոսի քերթողի է տողս:



# ՓԵԴՐՈՍԻ

# ԵՍՈՎՊԵԱՆ ԱՌԱԿԱՑՆ

## ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

---

### ՅԱՌԱՋԱԲԱՆ ՔԵՐԹՈՂԻՆ

### ԱՌ ՊԱՐՏԻԿՈՒԼՈՆ

---

*Վախճան գըրոցս իմ խորհեցեալ աստ առնել*
*Նա 'ի թողուլ հերկք իմաստ և այլոց.*
*Մերժեցի ապա զխորհուրդ իմ լըռելեայն 'ի մըտաց.*
*Զի թէ իցէ իսկ այսպիսեաց ոք ճարտար,*
*Իբր ըզթողեալսն իմ գուշակել կարասցէ,*
*Զի յիշատակ իւր զայն նըմա արձանագրել ցանկասցէ.*
*Քանզի ուրոյն իւրաքանչիւր ումեք խորհուրդք են 'ի բնէ,*
*Եւ ինքնուրոյն նըկարելոյ զայն երանգ.*
*Իրաւացի պատճառք, և ոչ միտք թեթև,*

Յորդորեցին զիս 'ի գրել ։
Եւ զի դու, ով Պարտիկուլէ, առասպելեօք զուարճանաս,
Զոր եսովպեանս անուանեմ և ոչ առակս Եսովպայ,
(Զի նա սակաւ ինչ ասաց, իսկ ես յոլովս ճառեմ
Ի ձև նախնի՝ այլ իրըս նոր երկնելով,)
Ընթերցիր երբեք երբեք ըզգիրըս զայս ըզչորիր,
Եւ եպերել թէ զսա առցէ չարութիւն,
(Զի ապիկար 'ի նմանել՝ հարկաւորի յեպերանս,)
Ինձ այն են փառք զի դու և քո նըմանիք
Առնուք 'ի գիրըս ձեր զիմաստս իմ 'ի կիր,
Արժանաւոր զայնս յաւերժ յիշատակաց վարկուցեալ ։
Ըզդըպրութեանց ինձ տենչալի է յոյժ տանել դըրուատիս ։

---

## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Խաղ քեզ թուի, և արդարև խաղամք թեթև եղեգամբ,
Զի կարևոր քան զայն չունիմք ինչ վաստակ ։
Բայց ուշիւ ակնարկեա 'ի խաղալիկս յայսոսիկ,
Քանիոն ընդ սոքիւք զըտանիցես պիտանի ։
Ոչ ինչ թըւին վեր 'ի վերոյ՝ չեն միշտ այն.
Խաբէ ճակատն ըզյոլովս, և զայն նուազունք իմանան
Զինչ մատենագրին 'ի խորս անդ ջանք ծածկիցեն ։
Զի մի թուիցիմ զայս վայրապար ասացեալ,
Զառաջիկայս քեզ յաւելում առակ աքսի և մըկանց ։

## ԱՌԱԿ Ա.

### ԱՔԻՍ ԵՒ ՄԿՈՒՆՔ

*Զխորամանկն ոչ է մարթ մանկաւ ըմբռնել.*

---

Ծանրաբեռնեալ աքիս ամօք և ալեօք,
Չկարէր արագ ըզհետ մկանց հասանել.
Թաթաւեալ ապա յալեր՝ կայր լըքեալ
Ի խաւարչուտ վայրի ուրեք ընկեցիկ:
Ճարակ ըզնա միոյ 'ի մկանց կարծելով՝
Հաս 'ի վերայ, և ըմբռնեալ ըսպանաւ.
Երկրորդն ապա և երրորդ նոյնպէս անկան 'ի կորուստ:
Այլ յետ այլոց ումանց ըզնոյն կրելոյ վտանգ,
Ակըն զառամ ումն 'ի մկանց, որ յաճախ
Յորոգայթից և յակնատաց էր զերծեալ,
Այլ զխորամանկ թըշնամւոյն դիտեալ ըզդաւ 'ի հեռուստ,
Նոյնպէս բարեաւ հնացես, ասէ, ո՛վ աքիս,
Որպէս ալիւրդ ես որ անկեալ դընիս աստ:

## ԱՌԱԿ Բ․

### ԷՇ ԵՒ ԳԱՂՂԻԱՑԻՔ

*Թշուառաց է թշուառ, որ հէք 'ի կեանս, և հիքագոյն է 'ի մահու.*

---

Որ մինչգամ չարաբաստիկն է 'ի ծնէ,
Ոչ վըշտակիր և եթ 'ի կեանս, այլ և ըզհետ իսկ մահու.
Մ՚ընան նըմա զաւըն բախտին տառապանք։
Սովոր էին Գաղղիացիք շուրջ ածել
Ըզբեռընբարձ էշ Կիւբեբեայ առ 'ի մայր.
Իսկ 'ի զըսւել նորին զանիւք և փաստակօք 'ի կենաց,
Թըմբուկս ինքեանց զերծեալ ըզմորթն արարին։
Հարցեալք ապա յումեմնէ՝ զի՞նչ նորահնարն այն էր խաղ,
Իշակս այս մեր, ասեն, աղատ զանձն 'ի մահու համարէր,
Բայց և այժմիկ ըզգլխակամբ իւրով հարուածք թօթափին։

---

## ԱՌԱԿ Գ․

### ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ

*Արհամարհէ հպարտ որում ոչն է ձեռնհաս.*

---

Բարձր 'ի յայգւոջ տեսեալ ողկոյզ խաղողոյ
Խընդրէր աղուէս սովալըլուկ ընդոստ 'ի վեր վազելով.
Այլ 'ի չկարելն հըպել յայն, 'ի բաց եկաց ասելով.
Տըհաս դեռ ևս է, չէն ինձ կամք առնուլ ըզխակն 'ի ճաշակ։
Ի խրատ անձանց զառակըս զայս ընկալցին
Որք մինչգամ արհամարհեն յոր ոչն իցեն ձեռնհաս։

## ԱՌԱԿ Դ.

### ՁԻ ԵՒ ՎԱՐԱԶ

*Այր վրէժխնդիր անձին իւրում պատրաստէ չարիս.*

---

Ուր սովորեալն էր ձի բուժել ըզծարաւ ,
Անդ թաւալեալ վարազու ըզհուն գետոյն պղտորեաց ։
Աստի դըրդեալ վէճ , և ձիոյն սըրտմըտելով ընդ երէն ,
Նըպաստ 'ի կռիւ դիմեալ խընդրեաց 'ի մարդոյ .
Եւ զնա 'ի նուս իւր առեալ՝ առ Թըշնամին արար դարձ ։
Յայնժամ լարեալ ըզլայնալիճն հեծելոյն ,
Եւ զոսոխն արկեալ տապաստ նետահար ,
Զայս աւանդէն նորա առ ձին խօսեցեալ .
Խընդամ ընդ գալն իմ յօգնութիւն քոյին 'ի քէն աղերսեալ ,
Զի գտի աւար , ուստի քանի դու պիտանի իցես ինձ ։
Այսպէս ձիոյն ըստիպեաց կրել ակամայ սանձ 'ի կզակ ։
Յայնժամ տըրտմեալ ասէ ձի . Ի գերութիւն մատնեցայ ,
Վրէժ մնոտի անմըտաբար խընդրելով ։
Բարկացողաց լիցի առակս այս 'ի խրատ ,
Ըզվնաս անպարտ յանձն առնուլ ,
Քան մատնել զանձն օտարի ։

## ԱՌԱԿ Ե.

## ՔԵՐԹՈՂՆ

*Զմարդիկ ոչ թէ թուել, այլ կշռել պարտ է.*

---

Զի յաճախ մասամբք բարեաց մի ոք յաղթէ բազմութեան,
Աւանդեցից յետնոց ՚ի ցոյց հակիրճ վէպ:
Դըստերս երիս այր ոմն եթող ՚ի մահուն.
Մին գեղեցիկ որ հրապուրէր զարս աչօք,
Միւսըն գեղջուկ բարեբարոյ ժիր ՚ի յիւ,
Իսկ երրորդըն ժանտաժուտ գինեսէր:
Ըզմայր նոցին կացոյց ժառանգ ծերունին,
Բաշխել ըզգոյս իւր հաւասար երեցունց,
Բայց մի զբաժինսն ժառանգել կամ վայելել կարասցեն.
Իսկ թէ հրաժեշտ յիւրաքանչիւր բաժնիցըն տալ կամիցին,
Հարիւր սեստերտ հատուցանել մօր իւրեանց:
Ելից զԱթէնս շուրջ հռչակ համբաւոյն.
Մայրըն խնամոտ զիրաւագէտս հարցանէ.
Ոչ ոք մեկնէ իբր ըզբաժինսն ժառանգել չկարիցեն,
Եւ ոչ շահել ինչ անտի:
Եւ դարձեալ, որ հրաժարել կամիցին
Ո՞ր աղագաւ հատուցանել նըմա տոյժ:
Երկարատև անցին աւուրք ՚ի վերայ,
Եւ իբրև ոչ գայր կտակին միտք ՚ի յայտ,
Թողեալ ծնողին զատեանս ՚ի բաց և ապաստան ՚ի խիղճ իւր,
Բողին ըզզարդ կանացի և ըզհանդերձս հան բաժին,
Եւ զներքինիս, ըզլերկս, և զկոնք արծաթի.
Աւրագործին զագարակս, ըզխաշն և զգիւղ և զմըշակս,
Եզինս և զրաստ, և զհողագործ երկոց կահ.
Իսկ արբշըռին զըշտեմարան լի վաղեմի կարասիւք,
Ապարանս շքեղ, և զցանկալի բուրաստան:
Իբրև այսպէս բաժանեալ պատրաստէր տալ դըստերացն

Հաւանութեամբ ժողովրդեան՝ որ ճանաչէրն ըզնոսա,
Յանկարծ Նաւպլ եկաց 'ի մէջ ամբոխին,
Եւ ասէ. Ո՛հ, թէ զգայր զայս հայրն 'ի շիրմին,
Ի՞բր 'ի ցասումն բըրդէր,
Զի ոչ ըզկամս իւր կարացին ատտիկեցիք թարգմանել:
Ապա հարցեալ, նա զբոլորից լոյծ ըզվրիպանս և ասէ.
Ըզտունն, ըզզարդ, ըզբազմազուարճ բուրաստան
Եւ զհէն զինիս տուք ասրագործ գեղջկին.
Ըզձորձ, զուլունս և զըսպասեակս այլովքն հանդերձ այնըմ տուք,
Որ շուայտութեամբ վարէ կեանս.
Իսկ զանդաստան, ըզգիւղօրէս և զհօտ խաշանց ընդ հովիւս
Ընծայեցէք պոռնըկին.
Զի ոչ ուրուք համբերելով ներհակ բարուցն ինչ առ իւր,
Զհանդերձանսին վաճառեսցէ անգեղեայն,
Ըողն առ 'ի զարդս հայթայթել՝ տացէ 'ի բաց զարտօրայս.
Իսկ խաշնասէրն յօժար յասէրն 'ի վաստակ,
Յանձն առցէ տալ անարգ գընոց ըզգեղխալից տունն 'ի բաց.
Այսպէս ոչ ոք ժառանգեսցէ զբաժին իւր,
Եւ 'ի գնոց անտի իրացըն տըւելոց 'ի վաճառ
Զառեալ արծաթըն տուժեսցեն մօր իւրեանց:
Յոր ինչ ահա չեղեն հասու միտք բազմաց,
Միոյ ուրուք գիտաց գտանել զայն հանճար:

## ԱՌԱԿ Զ·

### ԿՌԻՒ ՄԿԱՆՑ ԵՒ ԱՔՍԻՑ

*Բարձրաբերձք 'ի լերանց լինին չարաչար.*

---

Ի պարտութիւն մատնեալ մկանց 'ի տալ ճակատ ընդ աքսից,
(Որոց վէպք 'ի կապելայս նկարին),
Մինչ դառնային 'ի փախուստ,
Հազիւ անկեալ 'ի նուրբ ծակոտի հապըշտապ,
Զերծան ուրեմն 'ի մահուանէ մազապուր:
Բայց սաղարք նոցին եղջերս 'ի գլուխ իւրեանց բերելով,
Նշանաւորս 'ի ճակատուն երևել
Զի զհետ իւրեանց այլ զօրականըն գայցէ,
Կառեան 'ի դրունս անդ և գերի 'ի թշնամեաց վարեցան.
Զորս զենեալ յաղթականին, սուզեալ ժանեօք առ ընկլուզ
Ի լայնատարը որովայնին յանդընդախորն 'ի յանձաւ:
Յորժամ արկածք չարեաց զազգնըս շուրջ պատեալ պաշարեն,
Վտանգի աւագանին. իսկ խառնամբոխըն դիւրաւ
Պատըսպարեալ գտանէ անձին ապաստան:

---

## ԱՌԱԿ Է·

### ԱՌԱԿԱԽՕՍՆ

*Այր անմիտ որ ինչ ինքն գործէ, զայն նաև արդար համարի.*

---

Դու որ ըզգիրս իմ մանրախոյզըդ քըննես,
Եւ ծանր է քեզ զայս ազգ խաղուց վերծանել,
Դուզնաքեայ համբերութեամբ առ ինձ ըզսա 'ի ձեռին,
Որով զգիմաց քոց ամոքեմ լըրջութիւն,
Ի մոյգըս նորս * ատամնօր ածեալ զԵզովպ յերևան:

* Այս ինքն 'ի նոր ձև տաղից:

Իցիւ թէ բնաւ 'ի դարեւանդ պելիոնեան անտառին
Մի՛ տապալէր եղեւնին թեսաղացի տապարաւ ,
Եւ մի՛ Արգոս առ անհրաժեշտ մահուն յանդուգն արահետ
Աջակցութեամբ Պալլասայ ըզլաստափայտն յօրինէր ,
Որ նախկին զանհիւրընկալըն Պոնտոսի եհերձ ծոց
Յունաց և անյունաց 'ի կորուստ ։
Զի աւանիկ և գոռոզին իսկ Այետայ ողբայ տուն ,
Եւ արքունիք Պելիասայ ոճրիւ Մեդեայ անկեալ կան .
Որ զվայրենի միտս 'ի պէսպէս յածեալ 'ի հնարըս չարեաց ,
Անդր անկաւ 'ի փախուստ յօշեալ եղբօրն անդամովք ,
Անդ ըզՊելեայց ձեռս 'ի նախճիր շաղախելով հայրենի ։
Ի՞բր աղէ՝ թըռի քեզ տաղս ։ — Անհամ և այդ , առիցես ,
Եւ սըտայօդ պաճուճանաց իրաց վէպ .
Զի Մինոսի երեցագոյն տիրեաց նաւուք յեգեան ծով ,
Եւ արդար պատուհասիւ ելոյծ վըրէժս 'ի հինից ։
Իսկ զի՞նչ ապա մնայ ինձ առնել , ո՛վ ընթերցողդ Կատոն * ,
Թէ ոչ առակք քեզ բնաւին , ոչ առասպելք քաղցրանան ։
Մի՛ դու կարի լինիր գըրոց տըւայտիչ ,
Զի մի՛ նոքին քեզ յաւելցեն տըւայտանս ։
Առակս 'ի խրատ նոցին հայի՝ որ քամահեն զանմըտօք ,
Եւ զի գիտունք երեւեսցին՝ զերկինս անգամ այպանեն ։

* Այս ինքն խիստ և մանրաքննին դատաւոր ։

## ԱՌԱԿ Ը·

### ԻԺ ԵՒ ԽԱՐՏՈՑ

*Որ չարախօսին ընդդէմ չարախօսէ, չարագոյն է.*

---

Որ խըստագոյն ինչ խիստ ժանեօք խածանէ,
Զիւրն աստ տեսցէ յարացոյց ։
Իժ 'ի դարբնոց մըտեալ եխած ըզխարտոց.
Նա կարծրապընդ հարեալ նըմա 'ի դիմի,
Անմիտ, ընդէր, ասէ, վնասել ինձ դու հնարիս ատամամբ,
Որ գիտեմ մաշել ըզգէնս իսկ զերկաթ ։

---

## ԱՌԱԿ Թ·

### ԱՂՈՒԷՍ ԵՒ ՆՈԽԱԶ

*Այր չար կորստեամբ այլոց փրկէ զանձն.*

---

Այր խորամանկ եթէ 'ի վտանգ անկանի,
Վնասուք այլոց հնարի անտի խուսափել ։
Աղուէսն անկեալ յանգէտս 'ի ջըրհոր,
Մինչ դեռ փակեալ կայր շուրջ 'ի բարձր ոլորտից,
Դիմեալ նոխազ ծարաւոյծ 'ի նոյն վայր,
Եհարց թէ քաղցր էր ջուրն և էր յորդառատ ։
Իսկ նա դաւանըս նիւթելով Էջ այսր, ասէ, բարեկամ.
Որքան է ջրոյս քաղցրութիւն, զի ոչ յագիմ ըմպելով ։
Եւ իբրև էջ ալեւորն,
Աղուէսն ընդոստ ընդ բարձր եղջերսն 'ի վեր վազեաց 'ի գըլխոյն,
Եւ զնոխազն եթող խըրեալ 'ի շըրջափակ ճահճի անդ ։

## ԱՌԱԿ Ժ․

### ԶԱԽՏԻՑ ՄԱՐԴԿԱՆ

*Ոչ ոք ազատ է յախտից. այլ որ ինչ յետկոյս մեր է՝ ոչ տեսանեմք.*

---

Կըրկին եբարձ մախաղս ըզմեօք Արամազդ.
Ի թիկնակողմըն զայն յոր մերքըս կան ախտք,
Իսկ ըզչարեօք այլոց լըն՝ 'ի լանջակողմըն կախեաց.
Այսպէս անտես մընան չարիք մեր 'ի մէնջ,
Եւ վըրիպանաց այլոց բազմիմք դատաւորք:

---

## ԱՌԱԿ ԺԱ․

### ԳՈՂ ՍԵՂԱՆԱԿԱՊՈՒՏ

*Ձեռն ամպարշտին կաղ ոտամբ հասանէ պատուհաս.*

---

Գող 'ի բագնէն Արամազդայ լուցեալ Հրագ,
Ըզնոյն 'ի լոյս նորին կապտեալ կողոպտեաց:
Սեղանազերծ բեռն ըստ անձին իբրեւ արտաքս ելանէր,
Զայն յանկարծ 'ի սուրբ կրօնից եղեւ այսպէս լըսելի.
Թէպէտ չարաց այդոքիկ իցեն ինձ ձօնք ատելիք,
Եւ ոչ ցասումն իսկ ընդ գողօնսն յուզեալ յիս,
Այլ դու, ո՛վ ժանտ, լուծցես կենօք ըզմեղանացըդ պատիժ,
Յորժամ հասցէ օրըն վըրիժուց սահմանեալ:
Այլ զի մի հուր մեր լոյս տացէ եղեռան,
Իւ կրօնք պաշտօն զիցն անմահից ընծայեն,
Մի եւս 'ի սպաս այսուհետեւ լիցի լուսոյդ տուր եւ առ:
Այսպէս ցայսօր ժամանակի ոչ 'ի բոցոյ զիցըն Հրագ,
Ոչ 'ի Հրագէ ըզզոհ օրէն է վառել:

Քանի ինչ խրատ պիտանի բովանդակին յառակիս
Ոչ այլ ոք, բայց որ զգրեացն յայտնեսցէ.
Նախ զի յաճախ ձեռաստուն քոյին յանէ քեզ ոսոխ.
Դարձեալ զի ոչ ՚ի ցասնուլ դէպ կրէն ոճիրք պատուհաս ,
Այլ երբև ժամն հասանէ ճակատագրեալ՚ի բախտէն.
Նա և երրորդ, մի՛ բնաւ ՚ի պէտս անօրինին ձեռըն տալ ։

---

## ԱՌԱԿ ԺԲ.

## ԶԱՐ ԵՆ ՄԵԾՈՒԹԻՒՆՔ.

*Հրապոյրք չարեաց ինչք.*

---

Ցիրաւի են ատելի առաքինւոյ մեծութիւնք ,
Զի զճշմարիտ գովութիւն արկղ ոսկելից խափանէ ։
Հերակլէս յորժամ յերկինս ընկալեալ
Փոխան իւրոյ առաքինի քաջութեան ,
Ողջունէր զուրախակից ընդ իւր դիս ,
Ի Պլուտոնէ, (այն որ բախտին է զաւակ ,)
Ի գալ նորին դարձոյց խոժոռ զաչս ՚ի բաց ։
Նա ՚ի զվասներն յԱրամազդայ հարցանել ,
Ատել, ասէ, ատեցի զնա, զի բարեկամ է չարաց ,
Նա զամենայն ինչ պղծէ ըղշահ ՚ի ներքըս խառնեալ ։

## ԱՌԱԿ ԺԳ.

## ԱՌԻՒԾ ԹԱԳԱՒՈՐԵԱԼ

*Գովելի է անկեղծութիւն.*

---

Չիք օգտակար ինչ մարդոյ որպէս զուղիղըն խօսել.
Ընդունելի ամենեցուն է վըճիռս ,
Այլ բազում այն է՝ զի մատնի անկեղծութիւն 'ի կորուստ :
Առիւծու թագաւորեալ գազանաց ,
Որ 'ի զպարծանս արդարութեան ժառանգել
Զընդելականն 'ի բաց եթող սովորոյթ ,
Եւ գոհ ընդ դոյզն ինչ ճարակ , հաւատարիմ սըրբակրօն
Ի մէջ նոցա առնէր արդար իրաւունս :
Տիրէր խորին խաղաղութիւն , տիրէր չըքնաղ միութիւն .
Այլ աղմըկեաց զայն դըժընդակ քաղց անսըւաղ արքայէն .
Զի 'ի բոլոր որովայնին և 'ի նուաղել կորովոյն ,
Կեղծեալ տագնապ խօթութեան ,
Զգազանըս շըրջակայս զախտէն իւրմէ հարցանէր :
Մատուցեալ արջ , և զշունչըն ժանտ հոտոտեալ ,
Ասաց նըմա անկեղծիկ՝ թէ ժահ կոկորդ քո հոտի .
Եւ զըժպըհի ճըշմարտութեան եղծ վըրէժս առ ետեղ :
Իսկ շողոքորթն և երկչոտ ընդ հակառակըն կապիկ
Կինամոմն ասէր բուրել և կասիա յիշխանէն .
Այլ վաղահաս ըսպանմամբ պատառեցաւ ստութիւն :
Խորագէտն յայնժամ աղուէս աղերս արկեալ առիւծուն ,
Տըկարութեանս իմում , ասէ , ներեսջիր
Զի դըժընդակ դում և հարբուխ ունի զիս ,
Եւ ըռնգունք իմ անըզգայք են հոտոյ :
Այսու հնարիւք 'ի մահուանէ փըրկեցաւ :
Ճըշմարտութիւն և ստութիւն ընդ իշխանս
Յոգունց եղեն վնասակար ,
Մանաւանդ հանճար 'ի նոյն յաւելեալ :

## ԱՌԱԿ ԺԴ.

### ԱՅԾՔ ԵՒ ՔԱՂՔ

*Ոչ կերպարան, այլ քաջութիւն առնէ հաւասարս.*

---

Յընդունել մօրուսք այծից 'ի Դիոյ
Ըզչարեցան քաղք դըժկամակք զուգապատիւ գոլ իգաց :
Յայնժամ ասէ Արամազդ. Թողէք սնապարծ 'ի վայելս
Յափըշտակել զոցա զպատուոյդ ձերոյ զարդ,
Ուր ձեզ չկարեն հաւասարել քաջութեամբ :
Խրատէ առակըս ժուժկալել այնոցիկ
Որ նըմանին քեզ ձեւով՝ աննըմանիք լաւութեամբ :

---

## ԱՌԱԿ ԺԵ.

### ՂԵԿԱՎԱՐ ԵՒ ՆԱԽԱՍՏԻՔ

*Ի յաջողակս երկիր, յուսա 'ի ձախողակս.*

---

Ի գանգատել ուրումն երբեմն ըզբախտէն,
Զայս 'ի սփոփումըն նորին էարկ առակ Եզովպոս :
Նաւ ամէհի ալեկոծեալ մըրըրկօք,
Յարտասուել ուղեւորացն եւ յարհաւիրըս մահու,
Յաջողակ շընչմամբ հողմոց յանկարծ սլանայր անվըտանգ,
Ի փոխել երկնից 'ի զուարթ կերպարան,
Լի զնաւաստիս առնելով տարապայման հըրճուանօք :
Յայնժամ ասաց ղեկավարն խըմաստնացեալ 'ի վտանգէն.
Չափով արժան է խընդալ, եւ գանգատել իսկ չափով.
Զի 'ի բոլոր կենցաղումս ընդ խընդութեան խառն է վիշտ :

## ԱՌԱԿ ԺԶ·

### ՊԱՏԳԱՄԱՒՈՐՔ ՇԱՆՑ ԱՌ ԴԻՈՍ

*Կարի պատկառանք առնեն անպատկառ.*

---

Պատգամաւորս երբեմն շունք առաքեցին առ Դիոս,
Երջանկագոյն շնորհել իւրեանց նոր կենցաղ,
Եւ 'ի մարդկան Թշնամանաց գոլ ազատ,
Զի զքաղց իւրեանց սովատանջ
Ի նկանակ Թեփալից և յաղբ զազիր լնուլին :
Հասին հրեշտակք երթեալք 'ի գնացս յամրաքայլ,
Զի յուզէին ունդամբք յաղբիս կերակուր :
Կոչին յատեան, և իբրև ոչ տայր ոք ձայն,
Հազիւ ուրեմն Հերմէս գտանէ ըզնոսին,
Եւ խուճապաւ ածեալ ձըգէ անդր 'ի քարշ:
Այց ըզմեծին Արամազդայ այն ինչ զերեսըս տեսեալ,
Աղբեցին առ ահին ընդ արքունիսն համօրէն.
Եւ գանակոծ արտաքս անտի հալածեցան մականօք,
Արգելեալք 'ի դառնալոյ՝ վեհին Դիոյ հրամանաւ:
Իսկ այլ շըներն 'ի վարանս ընդ հրեշտակացն յամեցումն,
Համարելով չար ինչ գործեալ յիւրայնոց,
Այլը անյապաղ սահմանեցին յուղարկել.
Բայց համբաւոյն ըզնախընթացըն մատնեալ,
Թէ գուցէ նոյն պատահեսցէ և յետնոց,
Զերաստանըս սոցա լըցին խընկովք անուշիւք :
Հասանեն, և մուտ խընդրեալ՝ լինին իսկոյն լըսելի :
Ընդ աստուածոցն հայր բազմեալ վեհն 'ի գահոյս,
Շարժէ զշանթիս. և 'ի յանկարծ դըղըրդիւն
Թօրէ շըներն անուշահոտ բուրումն 'ի դուրս աղբախառն.
Արքունիքն յայնժամ բոլոր բողոքեն
Վրէժխընդիր անարգանացըն լինել:
Բայց Արամազդ չէ ըզնոսա պատժեալ՝ այսպէս խօսեցաւ.

Չէ արժան Թագաւորի չըշնորհել դարձ դեսպանաց.
Եւ ոչ մեղացն ինչ դըժուարին է մեզ կըշռել պատուհաս:
Բայց այս նոցա տացի արդար փոխարէն,
Մի՛ դառնալ վաղվաղակի՝ այլ կալ յամել անսըւաղ,
Զի մի՛ եւ անկարասցին ժուժել ունել զորովայն.
Իսկ որ զանարգսըդ զայդոսիկ յըղեցին,
Մի՛ երբէք առ 'ի մարդկան Թըշնամանաց լիցին զերծ.
Եւ արգելան յայրի ուրեք, ոչ առ ժամայն արձակեալ:
Այպէս յետինք սպասեալ մընան ցարդ հրեշտակացըն դարձի.
Եւ որ նորեկ զոք տեսանէ, գյետոյս նորին հատոտի:

---

## ԱՌԱԿ ԺԷ.

## ՄԱՐԴ ԵՒ ՕՁ

*Որ բարերարէ չարին, չարագոյն զնա կացուցանէ.*

Որ ոք չարին մատուցանէ ինչ նըպաստ,
Բատըրըջացի հուպ ընդ հուպ:
Բարձեալ տածէր ոմն 'ի ծոցի զիժ կարկամեալ 'ի ցըրտոյ,
Գըլթութիւն ընդդէմ անձին առնելով:
Այն ինչ նորա ոգեբերեալ զայրն ըսպան:
Եւ մինչ այլ ոք յօձից ըզնա հարցանէր,
Աս ինձ ըզբարերարըն ըսպանեալ,
Զի մի՛ ուսցի ոք, ասէ, բարեխնամող գոլ չարին:

## ԱՌԱԿ ԺԸ.

### ԱՂՈՒԷՍ ԵՒ ՎԻՇԱՊ

*Ագահն պահապան է ոսկւոյ, և ոչ տէր.*

---

Աղուէսու բրելով'ի յորջ իւր զերկիր,
Ակամս յոգունս հատեալ'ի խոր՝ հասանէ
Յանդընդաստոյգ այր վիշապի, ուր նա ծածկեալ պահէր գանձ։
Իբրև ետես զայն, ասէ.
Յանդըգնութեան խմում ներել նախ մաղթեմ.
Եւ քաջ ապա թէ խորհիս
Քանիօն ինձ անպատեհ իցէ ոսկի առ 'ի կեանս,
Հեզութեամբ պատասխանի ինձ տացես։
Զինչ օգուտ 'ի վաստակոց այտի քեզ,
Եւ ո՞ր այտի քեզ տըխուր,
Զի տըքնիս առ խարխափ զաւուրըս քո անցուցեալ։
Վիշապն ասէ. Ոչ ինչ իսկ.
Այլ'ի վեհէն Դիայ ինձ այս եղ բաժին։ —
Ոչ ինչ ապա առեալ քեզ, և ոչ իսկ տաս ինչ այլում։
Կըրկնէ վիշապն. Այսպէս հաճոյ լեալ բախտին։ —
Մի՛, աղաչեմ, բարկանար թէ խօսեցայց համարձակ.
Ծնեալ ընդ դիցն է ցասմամբ որ բախտակից քեզդ իցէ։
Ո՛վ որ գնալոցդ ես ուր նախնիք քո չոգան,
Հիմ կոյր մըտօք տանջես զոգիդ քո թըշուառ.
Առ քեզ, ագահդ, առ քեզ են բանք իմ, բերկրութիւն ժառանգիդ,
Որ անձամբ զանձն 'ի կերակրոյ և զգես զըրկես 'ի խընկոց,
Որ տըխրութեամբ զերաժըշտիկ երգոց քնարին լըսես ձայն,
Որ 'ի խըրախճան փողոց տանջիս, հեծես 'ի գինըս խորտկաց.
Որ դահադրամս 'ի հայրենի ստացուած քոյին կուտակես,
Ահագին ստերջութեամբ աշխատ զերկինս առնելով,
Եւ զմեռելոյթըս խնայես,
Զի մի բնաւին ինչ շահեսցի Լիբիտինէ 'ի քոյոյդ։

## ԱՌԱԿ ԺԹ.

## ԱՌԱԿԱԽՕՍՆ

*Զգրեալսն կատարել չէ անփառունակ.*

---

Զոր այժմէն նախանձ ըզգըրոցս առնել խորհի զատաստան,
Թէ և ծածկել ձըգնիցի, սակայն ճարտար զուշակեմ։
Որ ինչ 'ի սմա յիշատակի համարեսցի արժանի,
Ընծայեսցէ Եզովպայ. իսկ անհաճոյ ինչ գըտեալ,
Նրդնուլ 'ի գլուխն երդնուցու
Իմոց մըտացըս զայն լինել ըստեղծուած։
Զոր աստըստին պատասխանեաւս ըմբերանել կամք են իմ.
Զի թէ անարգ երկս այս իցէ, եթէ երբէք գովելի,
Նա եգիտ, կատարեցին ձեռք մեր զայն։
Բայց զըսկըսեալս ածցուք 'ի գլուխ զառաջարկ։

---

## ԱՌԱԿ Ի.

## ՆԱԽԱԲԵԿՈՒԹԻՒՆ ՍԻՄՈՆԻԴԵԱՅ

*Որ ճշմարիտ մեծութիւնն է, անկապտելի է.*

---

Բան իմաստնոյ առ իւր կան միշտ մեծութիւնք։
Սիմոնիդէս՝ որ հրաշագան գըրեաց տաղս,
Նա 'ի դիւրել զաղքատութեան ըզպիտոյս,
Ընդ մեծամեծ շըրջէր քաղաքս Ասիոյ
Սակեաւ վարձուք ըզգովութիւն յաղթականաց * երգելով։
Ի շահուց անտի ապա մեծացեալ,
Խորհեցաւ ծովագնացիկ 'ի հայրենիս իւր դառնալ.

* Գուպարայաղթ նահատակաց 'ի տօնս ողիմպիական խաղուց։

Եւ էր ծընեալ նա 'ի կըղզւոջն, որպէս ասի, 'ի Կէոս։
Եւ'ի նաւ, և ահագին զայն մըրրիկ
Միանգամայն և հնութիւն 'ի մէջ ծովուն քայքայեաց։
Կէսք ըզկամար բառնան գօտիս, ըզմեծագին այլք ըզկահ
Ի հայթայթանըս կենաց։
Ոմն անդանօր քըննասիրեալ հարցանէ.
Իսկ դու, Սիմոնիդէ, ո՞չ ինչ յընչից քոց առնուս։
Որում կըրկնեալ նա՝ Ամենայն ինչք իմ, ասէ, ընդ իս են։
Նուազունք ումանք յայնժամ 'ի լող զերծանին,
Զի կորեան ծանրաբեռինք անդ յոլովք։
Հասանեն հէնք յափըշտակել որ ինչ ուրուք էր բարձեալ,
Եւ մերկանդամս ըզմազապուրծն Թողուն։
Մերձ անդանօր էր Կլազոմէն քաղաք հին,
Յոր նաւաբեկքըն դիմեցին անկանել։
Ոմն անդ 'ի գիրըս պարապեալ բանասէր,
Որոյ յաճախ զերգըս տաղից Սիմոնիդեայ ընթերցեալ,
Ընդ հանճար նորա զմայլէր 'ի բացուստ,
Ի խօսիցըն ծանուցեալ հրաւիրեաց
Եւ հիւր ըզնա փափագանօք ընկալաւ,
Լիուլի տալով հանդերձ նըմա և դրամ և ծառայս։
Իբրև այլք առ 'ի խընդիր պիտոյից
Շուրջ ըզտախտակըն * տանէին, Սիմոնիդեայ հանդիպեալ,
Ասացի, ասէ, զի իմ ամենայն ինչ ընդ իս է,
Կորեաւ զոր դուքըդ փութացայք ժողովել։

* Յորս արկածք նաւաբեկութեանն նկարեալ էին, առ 'ի շարժելոյ զտեսօղս 'ի գութ և յողորմածութիւն։

## ԱՌԱԿ ԻԱ.

### ԼԵԱՌՆ ԾՆՆԴԱԿԱՆ

*Մի՛ մեծամեծս պանծար, այլ գործեա մեծամեծս.*

---

Լեառն 'ի յերկունս հեծէր 'ի ձիչ մեծագոչ.
Երկիր համայն դէտ ակնունէր 'ի յոյս մեծ.
Իսկ նա եած մուկն 'ի լոյս :
Այս քեզ 'ի խրատ ասացաւ,
Որ մեծամեծս ըսպառնաս
Եւ վըճարես իսկ ոչ ինչ :

---

## ԱՌԱԿ ԻԲ.

### ՄՐՋԻՄՆ ԵՒ ՃԱՆՃ

*Ճշմարիտ փառք զկեղծ փառս նսեմացուցանեն.*

---

Մրջիմն և ճանճ վիճեալ ուժգին թէ ո քան զո իցէ մեծ,
Ճանճն ըսկըսաւ նախ այսպէս.
Զի՞րդ կարես հաւասարել դու պանծանացըս մերոց.
Ի նուէր զոհից ըզդից բաժին ճաշակեմ,
Դեգերիմ 'ի մեհեանս և ընդ սեղանըս շըրջիմ,
Բազմիմ 'ի գըլուխ թագաւորի որպէս հաճոյ ինձ թըւի,
Եւ համբուրեմ զըզգաստ շըրթունըս տիկնաց.
Ոչ աշխատիմ, սակայն զընտիր ընտիրս իրաց վայելեմ:
Զի՞նչ յայսպիսեաց քեզ վիճակի, գեղջուկ դու :
Մեծ իսկ են փառք, յաւել նա, սեղանակից լինել դից.
Բայց այնմիկ որ հրաւիրին, ոչ որում են դըժպըհի.
Յաճախես 'ի սեղանս, այլ չև բազմեալ՝ հալածիս:
Զարքայս 'ի յուշ ածես ինձ և ըզշըրթունըս տիկնաց,

Եւ խրոխտանաս ընդ այն՝ զոր պարտ էր քեզ ծածկել ամօթով։
Ոչ վաստակես, վասն այն կարօտ գտանիս 'ի ժամ պիտոյից։
Իմ ժիրաժիր մըթերելով հատս 'ի պաշար ձմերայնոյ,
Ըզքեզ ընդ որմս տեսանեմ աղեւայոյզ 'ի ձորակ.
Զամառն 'ի դէմս ինձ ածեալ, ըզձիւնաբերըս լըռես.
Բայց յորժամ դու 'ի մահ ճեպիս սառամանեօք կարկամեալ,
Ի շտեմարան բազմամըթեր բնակեմ յայնժամ ես անհոգ.
Շատ իսկ արդեօք ըզմնապարծ հըպարտութիւն քո փլուզի։
Խըրատէ առակս այս ըզմարդկան ազգ. կըրկին,
Այն որ 'ի սուտ գովի մնափառ 'ի պարծանս,
Եւ որ զըստոյգ ժառանգէ փառս առաքինի լաւութեամբ։

---

## ԱՌԱԿ ԻԳ.

### ՍԻՄՈՆԻԴԷՍ ՊԱՀՊԱՆԵԱԼ

*Աստուածապաշտին կայ մնայ վարձ.*

---

Թէ քանիօն առ մարդիկ արգոյ իցեն գիտութիւնք,
Զայն 'ի վեր անդըր ցուցի.
Իսկ քանի այնոցիկ և 'ի վեհից շնորհեալ յարգ,
Այժմիկ 'ի գիր դըրոշմեցից։
Սիմոնիդէս, յիշատակեալն 'ի վերոյ,
Սակ արկեալ զըռնամարտկի ուրուք երգել յաղթանակ,
Մեկուսացաւ առանձին։
Բայց նիւթոյն նուազութիւն լեալ աշխուժիցըն խափան,
Քերթողական ազատութեամբ, որպէս օրէն է յաճախ,
Զերկուորեակ լեդեան աստեղս արկ 'ի մէջ,
Յիշատակ մեծի փառացն առնելով։
Քերթուածն հաճոյ թըւեցեալ,
Բայց զերիր մասն եւեթ վարձուցն ընկալաւ.
Եւ 'ի խընդրել ըզմնացորդն, ասէ. Նոքա հատուսցեն,
Որոց այլ կըրկին մասունք տաղիցըդ քոց պատկանին։

Բայց զի մի կարծիցես թէ զքեզ մերժեմ առ ցասման,
Խոստացիր ինձ գալ յընթրիս՝ յոր սերկեան
Ընդոտնմայինս, յորոց սակի ես դու, կամիմ հրաւիրել.
Թեպէտ և տօժ նա ինքն և վիշտ առ զըրկանացն էր կըրեալ,
Բայց զի մի ըզշնորհ նորին ապախտ առնել կարծիցի,
Յանձն էառ, ու'ի ժամադրեալ պահուն երթեալ բազմեցաւ.
Մինչդեռ զըւարթ խրախունք կոչնոցըն փայլէին բաժակօք,
Եւ զուարճացեալ հընչէր մեծաւ ըսպասուք տունն համօրէն,
Պատանեակք յանկարծ կըրկին փոշելիցք,
Քրտին 'ի մարմնոցըն սաստկապէս հոսելով,
Գերաշխարհիկք 'ի դէմըս գան հասանեն,
Եւ տան միում 'ի ծառայիցըն պատուէր,
Բզդ առնել Սիմոնիդեայ գալ 'ի դուրս,
Յաւելեալ յորդոր 'ի ձեպ անյապաղ.
Որոյ խռովեալ յարուցանէ զՍիմոնիդէս 'ի կոչնոց.
Բայն ինչ նորա եդեալ անտի զոտն 'ի դուրս,
Ընկաւ սըրահն անդէն և զայլըն կորոյս,
Եւ ոչ առ դուրսն անդ զըտանէր պատանեակ.
Յարկածիցն 'ի հռչակել՝ ոչ ոք ընդ այն երկմըտեաց,
Զի 'ի խնամոց դիցն առ 'ի վարձ քերդողին
Շնորհեցան կեանք ընդ տուժիցըն փոխան.

## ՎԵՐՋԱԲԱՆ ՔԵՐԹՈՂԻՆ

*Մատենագրութեան չիք սահման.*

---

Կա է բազում ինչ տակաւին՝ զոր մարթ է ինձ տալ՚ի գիր,
Կու բազմազան գանձեալ իրաց կան մթերք.
Սակայն չափով բանք հանճարեղք քաղցրանան,
Մանրատաղտուկ անցեալքն ըստ չափ եղանին:
Ուստի, ո՛ն Պարտիկուլէ, աստուածարեալըդ դու այր,
Որդ յաւէրժ կեցցէ անունդ ՚ի գիրս յայս
Ցորչափ լատին դըպրութեան կացցէ մնասցէ ուրեք յարգ:
Թէ ոչ թըւի քեզ գովելի ատտ հանճար,
Գէթ հաճեսջիր ընդ համառօտ պարզութիւն.
Զ որ այնչափ իրաւացի է գովել,
Որչափ տաղտուկ և ձանձրալի են քերթողք:

# ՓԵԴՐՈՍԻ

# ԵԶՈՎՊԵԱՆ ԱՌԱԿԱՑՆ

## ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

---

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

Եթէ ուրեք երբէք 'ի ներքս ածեմ զանուն Եզովպայ,
Որում վաղու ես հատուցի զիմ պարտիս,
Նա 'ի յարգ գըրոցս իմա զայն ածեալ.
Որպէս առ մեօք արուեստագէտք ոմանք սովոր են առնել,
Որք մեծագոյն պարծանս երկոցն համարին
Նշանագրել Պրաքսիտելէս* 'ի կիճ նոր,
Եւ յարծաթի ըզՄիւռոն**:
Զի կըծանողըն նախանձ սիրող հընոյն առաւել
Քան թէ այժմուցս է բարեաց:
Այլ ահա գամ հասանեմ 'ի հանգունակ ինչ առակ.

* Անդրիագործ անուանի:

** Արծաթագործ ճարտար:

## ԱՌԱԿ Ա.

## ԴԵՄԵՏՐ ԵՒ ՄԵՆԱՆԴՐ

---

Դեմետրիոս այն որ փաղերն անուանի,
Յորժամ բռնի կալաւ զԱթէնս ընդ ձեռամբ,
Ռամիկն ըստէպ բազմախուռն, որպէս սովորն է, դիմէր,
Կեցցէ՝ նըմա գոչելով:
Նոքին իշխանք զաջն, ընդ որով ընկճէին,
Գան համբուրել հեծեծելով անբարբառ.
Ընդ դառն արկածըս բախտին:
Դիւրասէրք իսկ և պղերգք խլըրտեալ եկին 'ի վերջէ,
Զի մի իւրեանց թերութեամբ այլոց վնաս ինչ հասցէ:
Իր և Մենանդր ընդ նոսա,
Կատակերգակ տաղից 'ի յերգս անուանին.
Զորս ընթերցեալ Դեմետրի՝ չև քերթողին գոյր ծանօթ,
Եւ զարմանայր ընդ գեղ նորին հանճարոյ:
Ըզնա տեսեալ բռնաւորին 'ի վերջնում անդ 'ի գնդի,
Զի իւղաթորմ լայնազգեստ գայր նազելի մեղկ 'ի ձեմ,
Ո՞ր այն, ասէ, դա գուսան ժըպրհի գալ ինձ յանդիման:
Սա ինքն, ասեն մերձակայք, սա է Մենանդըր քերթող:
Յայնժամ փոխեալ ըզբարբառ,
Չիք ոք, ասէ, չիք գեղանի քան ըզդա:
Եւ ըզքերթողն ընդ տաղից պատշաճ փառօք պանծացոյց:
Մատենագիրն 'ի զգօնութիւն իւր ընկալցի զայս առակ.
Քանզի համբաւ ոչ գեղխութեամբ՝ այլ հանճարով ժառանգի:

## ԱՌԱԿ Բ.

## ՈՒՂԵՒՈՐՔ ԵՒ ԱՒԱՆԱԿ

*Բերան փքոցուռոյց, ոտք փախստեայք.*

---

Զինուորք երկու աւազակի պատահեն ․
Մին խոյս 'ի բաց տայ, միւսն հարեալ 'ի դիմի,
Քաջակորով բազկաւ լինի վրէժխնդիր ։
Ի սպանանել զողջն ապա անագան
Զինուորակիցն երկրորդ հասեալ 'ի վերայ,
Նա սուր հանեալ, զամղանն 'ի բաց մերկացեալ,
Ռազէ, ասէ, մատիցէ ո՞ն յասպարէզ,
Ցուցից նըմա թէ յոյս ումանս յարձակի ։
Իսկ մարտուցեալն յաւելու ․
Իցեւ վայրկ մի յառաջ ինձ գէթ բանիւքդ օգնէիր,
Զի ճշմարիտ զայն համարեալ արիագոյն կռուէի ․
Բայց արդ ըզսուրդ ամփոփեա, նոյն և զլեզու քո մեծապարծ,
Բա 'ի կարող լինելդ զայդ անհրմուտս խաբել ․
Զի ես որ զփորձ առի քանի գոս աջողակ 'ի փախուստ,
Գիտեմ զի չէք 'ի զօրութիւն քոյին երբէք վստահել ։
Ի ձայն առակս այս պատահէ այնոցիկ,
Որ խիզախեն 'ի յաջողակս փախստեայք 'ի վտանգի ։

## ԱՌԱԿ Գ.

### ԿՆԴԱԿ ԵՒ ՃԱՆՃ

*Կամակար մեղուցելումն չիք տեղի թողութեան.*

---

Ճանճ ըղձաղատ խայթեաց ըզգլուխ կընդակի.
Իսկ նա ուժգին ած իւր ապտակ առ 'ի ճըմլել զայն ընդ ափ:
Յայնժամ ճանճիկըն ծաղր ըզնա արարեալ,
Մահուամբ ըզխայթ մըրգուղ ճանճկան պատժել, ասէ, կամեցար.
Իսկ զի՞նչ ընդ քեզ առնիցես,
Որ 'ի վնաս քո նախատինս յաւելեր:
Ում նա ասէ. Դիւրաւ հաշտիմ ընդ անձին,
Գիտելով զի չեն ինձ կամք 'ի վնասել.
Բայց ըզքեզ, ո՛վ վատազգի և անըզգամըդ կենդան,
Որ հեշտանաս ըմպել զարիւն մարդկեղէն,
Զարալըլուկ ես ըղձայի սատակել:
Խրատէ առակս ամենեցուն իսկ ներել,
Որ ըստ դիպաց և որ կամայ մեղանչեն,
Թէ և պատժոց ըզսա դատիմ պարտաւոր:

## ԱՌԱԿ Դ.

## ՄԱՐԴ ԵՒ ԷՇ

*Երանելի է որ այլոյ վտանգաւն խրատի.*

---

Այր ոմն եղէն խոզ դիւցազինն Հերակլեայ,
Որում պարտէր վասըն կենացըն ձօնի,
Եւ հրամայեաց տալ ըզմնացորդս իշոյ իւրում ըզգարւոյն*.
Իսկ իշոյն արհամարհեալ զայն, ասէ.
Ի քոյոցդ իսկ կերակրոց ճաշակէի կամակար,
Եթէ չէր վարեալ 'ի սպանդ այն որ նովաւըն սընեալ.
Օրինակաւս այսուիկ զահի հարեալ միշտ,
Ի փառակար շահուց եղէ անձնապահ.
Այլ ասիցես. Յափըշտակողք ճոխանան. —
Աղէ արկցուք 'ի համար որք ըմբռնեալ և կորեան.
Եւ բազմաթիւ ըզպատժելոցըն գըտանեմք ըզժողով.
Զի սակաւուց ոմանց ժըպիրհ յանդըգնութիւն յաջողեալ,
Յոլովագոյնք մատնին նովաւ 'ի կորուստ.

* Զի և գարի ընդ զոհս հեթանոսացն խառնէր.

## ԱՌԱԿ Ե·

## ԽԵՂԿԱՏԱԿ ԵՒ ՇԻՆԱԿԱՆ

*Մտաձանձրութիւն զեղծուցանէ զդատաստան.*

---

Գըլթեն յաճախ մահկանացուք թիւր կարծեօք ·
Իսկ որ յամառ 'ի կարծիս մոլորութեան իւրեանց կան,
Հարկաւորին 'ի զեղջ՝ յիրացն 'ի յայտնել:
Ուրումն 'ի մեծատանց տօնըս խաղուց պատրաստեալ
Հրաւէր արար՝ առաջարկեալ վարձ հանուրց
Որ ինչ ոք և նորանորս ածել կարէր 'ի հանդէս:
Եկին ճարտարք առ 'ի մրցանս ըզգովից ·
Այր ընդ նոսա և խեղկատակ ոմն անուանի ծաղրածու,
Որ տեսարան ինչ խոստանայր չև ևս ածեալ 'ի թատրոն:
Ի հռչակ համբաւոյն դիմեաց քաղաքն համօրէն.
Սուղ ինչ յառաջ վայրք ունայնք՝ անձկանային ամբոխին:
Եւ նա եկաց անդ 'ի թատեր միայնակ,
Առանց իրիք հանդերձանաց, ոչ ոք ընդ իւր օգնական.
Ակընկալեք իսկ իրացն արարին խոր լռութիւն:
Ինքն ըզծոցով ըզգլուխն անդէն խոնարհեալ,
Ըզխոչքորի այնպէս կեղծեաց ըզխըռնինչ,
Մինչև պընդել բոլորից
Թագուցեալ ընդ մեկնոցաւըն խոչքոր:
Յունց հանդերձիցըն տալ նըմա հրամայեն.
Եւ 'ի ցընցելն իբրև զըտաւ և ոչինչ,
Յաճախեցին զըրուատիք՝ ծափըս նըմա հարեալ յոյժ:
Շինական ուրուք տեսեալ զայն, յաւել.
Ո՜ն և օ՛ն թէ կարասցէ յաղթել ինձ.
Եւ խոստացաւ ըզնոյն և ինքն առնել ճարտար յետ վաղուին:
Խըմբի մեծ եւըս ժողով,
Վարկ ըզքընաւից զրաւեալ ըզմիտըս կանխաւ.
Բազմին 'ի ծաղր առնել, և ոչ 'ի զըննել:

Երկաքանչիւր 'ի տեսարան եկանեն.
Խեղկատակին նախ խըռլինչ շարժէ գըլուատ ծափաձայն ,
Եւ աղաղակ յառնէ մեծ ։
Յայնժամ կեղծեալ գեղջկին խոչքոր ընդ ձորձովք ,
(Զոր և ունէրն խնկապէս ,
Բայց զանխլանայր , զի չէր նոցա 'ի յառաջնումն ինչ գըտեալ.)
Կրծանէ զունկն խնկականին զոր ծածկէր ,
Եւ ըղընութեան ելուզանեն ցաւք ըղձայն ։
Յայնժամ ամբոխըն գոչէ
Զխեղկատակին նըմանագոյն զոլ կեղծիս ,
Եւ զչինականն 'ի բաց վարել ըստիպէ ։
Բայց նա զխոչքորն ածեալ անդէն յերևան ,
Եւ բացայայտ ցուցեալ փաստիւ զանօթապարտըն վրիպակ ,
Ահա ինքն , ասէ , ցուցցէ ձեզ
Թէ որպիսիք ոմանք իցէք դատաւորք ։

---

## ԱՌԱԿ Զ.

## ԿՆԴԱԿՔ ԵՐԿՈՒ

*Ոչ ամենեցուն ամենայն ինչ պատշաճ.*

---

Սանտր 'ի յուղւոջ դէպ կընդակի ումեք եղև գտանել.
Ընդ և այլ ոք եհաս ձաղատ նայապէս .
Ըզէ , ասէ , որ ինչ իսկ դու գըտեր շահ
Հասարակաց լիցի մեզ ։
Նորա ըզգիւտն յայնժամ ցուցեալ , յաւելու .
Վեհից մեզ կամք օգնեցին , այլ յաջողեաց ըզմեզ բախտ.
Զի ածուխ ըստ առակին գըտաք զանձուց փոխանակ ։
Ի ձահ զանդատս է վրիպելոյն 'ի յուսոյ ։

## ԱՌԱԿ Է.

## ԻՇԽԱՆ* ՓՈՂԱՐ

*Անմիտ հպարտութիւն ծաղրի յանձնեցուց.*

---

Յորժամ սնոտի պարտեալ շնորհիւ հոգի սնափառ փըքանայ
Յանդուգն յանձին վստահութիւն բերելով,
Թեթեւամիտ հըպարտութիւն դիւրաւ 'ի ծաղր անկանի։
Էր փողար ումն Իշխան անուն ոչ ինչ կարի անուանի,
Որ երգակից Բաթիլեայ սովորն էր գոլ 'ի Թատեր։
Սորա 'ի խաղս ինչ դէպ եղեւ, ոչ իսկ յիշեմ քաջ յորում,
Ընկանել չարաչար յանկարծ 'ի դարձ կազմածոյն**,
Եւ խորտակել նորա ըզսրունգ իւր աջակ,
Որ կամակար կըրկին աջինս 'ի սըրնգին***
Կորուսանել յանձն առնոյր։
Բարձեալ 'ի գիրկս ածաւ 'ի տուն իւր դառնաղէտ հեծութեամբ։
Անցին ամիսք ինչ ընդ մէջ, յանկ ել 'ի բոյժըս դարման.
Եւ որպէս է իսկ սովորոյթ զուարթաբարոյ հանդիսին,
Փափաքելի եղեւ նա՝ որ 'ի հնչումըն փողոյն
Զարթուցանէր զաշխոյժս յաճախ գուսանին։
Տօնըս խաղուց այր ումն յայնժամ պատրաստէր.
Եւ զի սկըսեալ էր Իշխանն 'ի տեսարան մըտանել,
Յորդորեաց ըզնա այրն աղերսանօք եւ վարձուք,
Երեւել եւեթ 'ի տօնս անդ խաղուց։
Ի գալ նորին հըծծէր շըշունջ ըզնըմանէ 'ի Թատեր.
Կէսք ասէին թէ մեռաւ,
Այլք թէ այժմիկ անյապաղ գայցէ նա այսր յերեւան։

* Իշխանդ յատուկ անուն է աստ, եւ միտք առակիս հոմութեամբս այսուիկ պարզին։

** Այսինքն Թատերական մեքենայն, որով վարէին հինք։

*** Ի լատինն մի եւ նոյն բառ Tibia նշանակէ զսրունգն եւ զսրինգ. եւ իմաստն է, զի լաւագոյն համարէր փողարն զբեկումն երկուց փողոց սրնգին՝ որ աջինքն կոչէին, քան զձախոյ սրունգն իւր։

Ընդ բանալ վարագուրին ընդ Թաւալել ոտոտմանց ,
Բարբառեցան դէք ըստ բարուց վաղեմի ․
Յայնժամ ծանօթ երգ պարուն ըզգարձաւորըն պատրեաց ,
Եւ այս իմաստ էր երգոյն ․
Յընծա Հըռովմ աննըկուն ընդ ողջամբ գարձ Իսլամին * ։
Յառնեն 'ի ծափ հանդիսատեսք , փողարն համբոյրս ընձեռէ ** ,
Ուրախակից իւր կարծելով թէ լինէին բարեկամք ։
Կարգ ասպետացն հասու եղև ծանծաղամիտ վրիպակին ,
Եւ քըրքիջ բարձեալ տայր զերգն երկրորդել ։
Կըրկնեցաւ երգն , և հէքն այն անդ 'ի բեմին
Խոնարհէր 'ի սպառ յերկիր մածանէր ։
Ասպետք դարձեալ ծափս հարկանեն ծաղրալից ․
Կարծէր ամբոխն ըղնա յաղէրս անկեալ 'ի հայց պըսակին ։
Այլ իբրև իրքն հանուրց խըմբից յայտնեցան ,
Յայնժամ Իսլամն 'ի ձիւնաթոյր պատեալ ըղըրունգն 'ի յերիզ ,
Ի կօշիկըս ձիւնաթոյրս 'ի ձիւնաթոյր պարեգօտ ,
Հըպարտացեալ արքունականըն փառօք ,
Մըղեալ բռընցի յամենեցունց արտաքս 'ի բաց վարեցաւ ։

* Այսինքն վասն Թագաւորին , զոր փողարն զանձնէ համարէր ասացեալ վասն Իշխան անուանակոչութեանն ։

** Ձեռն 'ի շրթունս ածելով և ապա առ հանդիսատեսս կարկառելով առ 'ի շնորհակալել ։

## *ԱՌԱԿ Ը.*

### ՊԱՏԵՀՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԿԵՐԻ

***Սրանայ անդարձ ժամանակն 'ի բաց.***

---

*Թեւթեւաթռիչ կայ զածելեաւ ճաղատ մազեղ 'ի ճակատ,*
*Զոր թէ հասեալ ըմբռնիցես, կալցիս զայն.*
*Գուն մի սահեալ, ըզնա եւ Զեւս ոչ կարասցէ նահանջել.*
*Սա զուգ իրաց պատեհութիւն քեզ յայտնէ:*
*Ըզժամանակն այսպէս ածին հինք 'ի նկար,*
*Զի մի դանդաղ պըղերգութիւն արկցէ երկոց ինչ խափան:*

---

## *ԱՌԱԿ Թ.*

### ԶՈՒԱՐԱԿ ԵՒ ՈՐԹ

***Մի՛ խոզ զԱթենաս*.***

---

*Յանձուկ 'ի մուտս առ դըրան ոգորելով ցուլ եղջերօք,*
*Իբրեւ 'ի զոմս անդըր չկարէր մըտանել,*
*Խրատէր որթիկն ըզնա 'ի վայր գալարել:*
*Յայնժամ. Կարկեաց, ասէ ցուլ,*
*Զեւ իսկ ծընեալ քո՝ զայդ ես քաջ գիտէի:*
*Որ զգիտնագոյնն իշխէ խրատել՝ զայս իւր կալցի ասացեալ:*

* Ցառակս ասէին զայս հինք 'ի խրատ ոգւոյ՝ որ զգիտնաւորս կամէր ուսուցանել:

## ԱՌԱԿ Ժ.

### ՈՐՍՈՐԴ ԵՒ ՇՈՒՆ

*Զամենայն ինչ ծախէ ժամանակ.*

---

«Քաջամարտիկն ընդդէմ բնաւից թեթեւընթաց երէոց ,
Մի՛շտ ըղձաճոյըն կատարեալ տէրունի ,
Ըսկըսանէր շուն անկանել յամեաց տիովք ծանրաբեռն.
Եւ վարեալ երբեմն 'ի մարտ ընդ թաւաստեւ վարազու ,
Զունկըն նորին արար ընդոստ հաս և խած.
Այլ ոչ զօրեալ փուտ ատամանցն՝ ելիք եթող զորսն 'ի բաց ։
Եւ մինչ տըրտմեալ որսորդն ըզնա կըշտամբէր ,
Ասէ ցընա խրաւահաջ ծերունին.
Ոչ սիրտ իմ ոչ , այլ զօրութիւն պակասէ.
Զի՞ որպիսի երբեմն էի զայն գովեալ ,
Եւ որպիսի ոչ եմ այժմիկ՝ անգոսնես ։
Առ ինչ գրեցի զայս , Փիլիտէ , զայն դու ինքնին քաջ գիտես ։

### ԿԱՏԱՐԵՑԱՒ ՀՆԳԵԱԿ ԳԻՐՔ ԱՌԱԿԱՑՆ

### ՓԵԴՐՈՍԻ

# ՆՈՐԻՆ ՓԵԴՐՈՍԻ

## ԱՌԱԿԱՑՆ

### ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ

# ՆՈՐԻՆ ՓԵԴՐՈՍԻ
# ԱՌԱԿԱՑՆ

## ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ*

---

### ԱՌԱԿ Ա.

### ԿԱՊԻԿ ԵՒ ԱՂՈՒԷՍ

*Ագահն յաւելորդաց իսկ իւրոց չյօժարի տալ ինչ ումեք .*

---

Կապիկն աղէրս երբեմն էարկ աղուէսու ,
Մ՛ասն 'ի ձեռոյ իւրմէ շնորհել՝ իւ մարթէր
Պարկեշտաբար ըզմերկ յետոյսըն ծածկել ։
Պատասխանի ետ չարաշուէրն և ասէ .
Թ՛է և երկայն ինձ քան ըզպէտս է ագի ,
Ընդ կարակուռ և ընդ մացառս ընտրեմ ածել զայն 'ի քարշ,
Վ՛ան թէ հանել խուն ինչ անտի քեզ բաժին ։

* Որ 'ի վեցերորդ գիրս յայս բովանդակին առակք, յաւուրս մեր այլ և այլ ուրեք յայլեայլ գրչագիր մատեանս գտան ։ Եւ ապա մեծանունն Մայ, որոյ հռովմէական եկեղեցւոյ կարդինալ, զվաւերական օրինակ այնոցիկ 'ի վատիկանեան մատենադարանին գտեալ, զընթերցուածս ևս նոցին ուղղագրեաց ։ Ուստի առեալ յաւելումք աստ զայնոսիկ 'ի վեցերորդ գիրս առակաց Փեդրոսի ։

## ԱՌԱԿ Բ.

## ՔԵՐԹՈՂՆ

*Մի՛ յաւաւելն ձգտիր.*

Եթէ բնութեան զազգ մահացուաց էր ըստ հաճոյս իմ հաստեալ,
Յոյժ առաւել բարեմասին հասեալ նոքա գտանէին.
Զի որ ինչ ձիրս անբաւից բաշխեալ ետ բախտն աննախանձ,
Համօրէն մեզ ընձեռէր և զյարձակումն առիւծու
Եւ զոյժ փղի, զերկայնաւուրս ագռաւու,
Եւ զամեհի ձիոյ հլութիւն և զփառըս վէս զուարակի,
Մարդկեղինաւս հանդերձ ժրաջան հանճարով:
Այլ ծիծաղի արդեօք Դիոս 'ի բարձանց,
Որ զայն կարի իմաստութեամբ չետ մարդկան,
Զի մի գուցէ յանդըգնութիւնըս մեր խրոխտեալ ժըպըրհեսցի
Յափըշտակել 'ի նմանէ զաշխարհական պետութիւն:
Գոհ եք ընդ պարգևս ամենայաղթըն Դիայ,
Կեցցուք ապա ցոր վայր և մեզ ճակատագրեալ է կենցաղ,
Մի՛ 'ի վեր քան ըզպայման մահկանացուի նըկըրտեալ:

---

## ԱՌԱԿ Գ.

## ՊՐՈՄԵԹԷՈՍ ԵՒ ՆԵՆԳ

*Յաղագս ճշմարտութեան և ստութեան.*

Նորաստեղծ ազգի մարդկան Պրոմեթէոս արարիչ,
Յաւընդագոյն 'ի կաւոյ զճըշմարտութիւն ըստեղծեալ,
Իբրաւարար կացոյց նոցա 'ի միջի:
Ի մեծէն Դիայ հասեալ յանկարծակի նըմա կոչ,
Աւանդէ խաբուսիկին ըզձեռակերտ իւր Նենգոյ,
Այնմ որ նորեկ աշակերտեալ էր նըմին:

Ի նախանձ նըմանութեան միւս այլ սա ինքըն պատկեր
Ի նոյն դէմս 'ի նոյն հասակ և ըստ բոլոր անդամոց
Համգունակի 'ստ ժամուն փութոյ ճարտար մատամբք յերիւրեաց.
Եւ հրաշագան ձեռակերտին հասեալ գոգցես 'ի յամբոկ ,
Պակասէր նըմա կաւ ոտից նորին 'ի կերտուած .
Եւ 'ի դառնալ վարժապետին յեղակարծ՝
Զահի հարեալ փութայ 'ի կայս իւր բազմի ։
Ընդ այնքան նըմանութիւն անդրոյն ապշեալ Պրոմեթեւս ,
Առ 'ի հանդէս առնել իւրոյ արուեստին ,
Զերկուսին իսկ 'ի հնոց 'ի միասին արկ զանդրիս ։
Այն ինչ ապա եհեղ 'ի թուրծս անդր հոգի ,
Ճըշմարտութիւն սուրբ ըզգընայր ճոխաճեմ.
Իսկ իրանն անոտն 'ի գնացս անդ կաղայր ։
Յայնժամ կեղծեալըն կերպարան և գողացիկն այն վաստակ
Աստի զանուանըն կալեալ յորջորջեցաւ սըտութիւն .
Եւ ոյք ըզնա Կաղ կոչէն՝ համաձայնիմ մըտադիւր ։
Յաջողէ զախտից խըծբըծ ծածկել երբեմըն մարդկան ,
Սակայն յետոյ ապա գայ Ճըշմարտութիւն յերևան ։

---

## ԱՌԱԿ Դ.

## ՔԵՐԴՈՂՆ

*Լեր իմաստից և մի՛ գրոյն մտադիր.*

---

Իքսիոն մըշտահոլով շըրջէ անիւ ըստ վիպաց ,
Ըզյեղյեղուկ բախտին ըղխաղս յայտ իմն այսպէս առնելով ։
Տաժանաւոր վաստակօք Սիսիփ 'ի քերտըն նանիր ,
Յար ըզժայռ 'ի գլուխ լերին մըղելով ,
Ըզթաւալգլոր անկեալն անդրէն յար 'ի ստոր ,
Զանեզըրական յայտնէ զաղէտըս մարդկան ։
Տանտալոս 'ի մէջ ալեաց ծարաւի ,
Յուցանէ ըզշուրըջ պատեալ 'ի մեծութեանց զայր ագահ
Ընձեռընհաս հուպ իսկ լինել 'ի նոսին ։

Ջուր Դանայեանք ժամտաժուտք 'ի ծակ սափորըս բերեն,
Ապիկարք լնուլ երբէք զայնոսիկ,
Զի անյագուրդ է զեղխութիւն որ ինչ 'ի նա և շռայլես ։
Իսկ Տիտիոս տարածեալ ըսփիւռ ընդ ինն արտավար,
Յար աճեցուն կրելով լեարդ առ գըժընդակըն պատիժ,
Ըսպառնայ բըռնակալաց՝ որչափ տիրեն ընդ երկիր
Նոյնչափ անձանց յաճախել վիշտս և աղէտ ։
Սովորեցին հինք քօղարկել ըզճըշմարիտն առակաւ,
Զի զգօնն առցէ զայն 'ի միտ, ռամիկն 'ի խաբս ըմբռնեալ ։

---

## ԱՌԱԿ Ե·

### ՆՈՅՆ ԻՆՔՆ

### Զհրամանաց Ապողոնի.

Որ բնակես 'ի Դելփոս և 'ի չըքնաղըն Պառնաս,
Զինչ առաւել մեզ օգտակար, ուսո Փէբէ, տուր պատգամ ։
Սըրբոյ հարցկին վարուք քըստմընեալ ահա 'ի վեր գիսանին,
Դըղորդի եռոտանին, մռընչեն սեամք մեհենին.
Սարսեն սարդենիք, տիւ իսկ մռայլեալ մըթագնի,
Եւ Պիւթիա աստուածարեալ ձայնարկէ.
Ըզդելեան դից լուարուք ազինք ըզպատգամն,
Լերուք բարեպաշտօնք, և ուխտըս դիք աստուածոց.
Վերամարտիկք հայրենեաց, ծնողաց ձերոց ախոյեանք,
Վանեցէք վառեալ զինու զթըշնամիս,
Պաշտպանեցէք որդւոց ձերոց և զգաստասէր ամուսնաց.
Փութայք օգնել բարեկամաց, խնայել 'ի հէքն և թըշուառ.
Ձեռըն տալ առաքինեաց, ըզդէմ ունել նենգութեան.
Ըզչարեաց առնուլ ըզվրէժ և զամպարիշտըս նուաճել,
Պատուհասել ըզհարսանեաց գըրժողըս ժանտ եղեռամբք.
Մի լինել դիւրահաւան, այլ կալ ըզգոյշ 'ի չարաց ։
Զայսոսիկ տուեալ պատգամ անկաւ հարցուկն 'ի յաւիւն.
Եւ յաւիւն մոլեգնութեան պըրծան պատգամքն 'ի յուշոյ ։

## ԱՌԱԿ Զ.

### ԵՍՈՎՊ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՐ ՈՄՆ

*Այ 'ի խրատ անապարծ մատենագրի.*

---

Մատենագրի ուրումն 'ի լուր Եսովպայ
Զիւրն ընթերցեալ շարագրած՝
Յորում անձահըս վեր 'ի վայր մնապարծէր ,
Եւ զծերունւոյն հետաղօտեալ ըզկարծիս ,
Թերեւս , ասէ , քեզ պարծենալ թըւիցիմ ,
Բայց ոչ 'ի զուր ինչ վըստահել գայ մեզ ընդ մերըս հանճար :
Իսկ ծերունին տաղտկացեալ ընդ անշընորհըն մատեան ,
Բարւոք , ասէ , դու անձամբ զանձըն գովես ,
Զի չէ իսկ մարթ քեզ գովութեան յուսալ յայլմէ ումեքէ :

---

## ԱՌԱԿ Է.

### ՄԵԾՆ ՊՈՄՊԷՈՍ ԵՒ ՄԻ Ի ԶԻՆՈՒՈՐԱՑ ՆՈՐԱ

*Քանի՛ դժուարին է ճանաչել զմարդ.*

---

Ի Պոմպէի մեծին մի ոմն 'ի զօրացն այր յաղթանդամ,
Բեկբեկ 'ի զրոյց , մեղկաքայլ , կարծեալ բնաւից վատ և կնատ ,
Կարաւանի զօրավարին զարանամուտ գիշերայն
Ի բաց դարձոյց ըզջորիս
Զամրաբեռնըս կարասւով բարձեալ ոսկի և արծաթ :
Ըզհամբաւի հարան գողօնքն , ածաւ զինուորն 'ի յատեան .
Եւ մեծն առ նա Պոմպէոս
Զինուորակից իմ, ասէ , դո՞ւ զիս կողոպտել յանդըգնիս :
Նորա թըքեալ ընդ աչեակ
Եւ զթուքն 'ի բաց սըրբեալ մատամբըն , գոչէ .

Օ՛ն և օ՛ն խաւարեսցին բիբք աչաց
Եթէ տեսի , քաջ արանց , եթէ եղէ երբէք հուպ ։
Յայնժամ իշխանըն բարեսէր ետ հրաման
Հանել 'ի բաց զայրն անարժան բանակէն ,
Յանդգնութեանն այնմիկ ըզնա անբաւական համարեալ ։
Անցին աւուրք սակաւ , և ոմն այլազգի
Ի զօրութիւն բազկի իւրոյ ապաստան ,
Զայն ահա տայր հռովմայեցւոց 'ի մենամարտ ասպարէզ ։
Ահ կալաւ զամենեսեան , պետք ընդ իրեարս հըճճէին ,
Մինչև կընատն 'ի ձորձս , Արէն 'ի կորով ,
Մատեաւ առ մեծն 'ի յատենի անդ բազմեալ ,
Եւ մեղկաձայն ասէ . իցէ՞ ինձ օրէն ։
Նա 'ի մեծի անդ 'ի վտանգին մերժէ զայրն
Եւ հրամայէ վարել անտի զնա 'ի բաց ։
Ծեր ոմն յայնժամ 'ի մտերմաց իշխանին
Խորհըրդակից լեալ նըմա ,
Բախտ մեծ , ասէ , համարիմ յըղել ըզդա 'ի ճակատ ,
Յորում թեթև պատահեսցէ մեզ կորուստ ,
Քան զայր հըզօր՝ որում արկածք եթէ հասցեն պարտութեան ,
Քեզ մեղադիր լիցի զայն ։
Հաճոյ թուեցաւ Պոմպէի , և ետ հրաման զինուորին
Ելանել ընդդէմ մարտկին ախոյեան ։
Նորա զօտին ակն յանդիման բանակին
Կառափնատեալ արագագոյն քան ըզբան՝
Մինչ յաղթական դարձ առնէր , յաւել առ նա Պոմպէոս .
Մըտադիր , ով զօրական յաղթող , ձօնեմ քեզ պըսակ ,
Որ փառաց հռովմէական անուան եղեր վրէժխընդիր .
Այլ և իմ խաւարեսցին բիբք աչաց ,
(Ասաց և զձեռն յաւել զանձահ հանդոյն երդման զինուորին) ,
Եթէ չիցէ քո զկարասին իմ բարձեալ ։

## ԱՌԱԿ Ը·

### ՏԱՆՈՒՏԷՐ ԵՒ ԵՍՈՎՊ

*Թէ ո՛րպէս զխեռ մանկտին պարտ իցէ աճել 'ի զգօնութիւն.*

---

Այր տանուտէր, որոյ որդի ամեհի
Զառածեալ ապերասան մանկութեամբ
Չարագան զգերդաստանիկս առնէր անտես 'ի հօրէն,
Զայս Եսովպոս արար հակիրճ առ նա վէպ ։
Ոմն ըզզուարամ լծեաց արջառ ընդ որթու·
Եւ իբրեւ նա յանհաւասար ամոլակցէն խուսափէր,
Պատճառելով զանկեալն յուժոյ ըզհասակ,
Ասէ ցընա մաճականն· Աղէ ընդէր զանդիտես,
Ոչ առ 'ի հերկ լծեմ ըզքեզ, այլ առ 'ի զդա նուաճել,
Որ կըցացէն և եղջերցէ ըզյոդունս ։
Եւ դու թէ զդա ոչ պինդ ընդ քեզ միշտ ունիս,
Թէ զխեռ արբունս ոչ ամոքես ողոքով,
Տես մի՛ գուցէ բողոք 'ի տան զայրասցի·
Ըզխրատութիւն դարմանեսջիր հեզութեամբ ։

---

## ԱՌԱԿ Թ·

### ԵՍՈՎՊ ԵՒ ԸՄԲԻՇ ԳՈՒՊԱՐԱՑԱՂԹ

*Թէ զիարդ յամօք լինի սնապարծութիւն.*

---

Տեսեալ երբեմն Եսովպայ զըմբիշ յաղթող զի պարծէր,
Եհարց թէ էր արդեօք ոսոխն հըզօրագոյն քան ըզնա ։
Իսկ նա ո՛չ անդր, ասէ, և զինչ բարբառիս,
Իմ գերազօր քան ըզնորայն է կորով ։
Յայնժամ յաւել Եսովպ· Եւ ո՞ր քեզ քաջութիւն ո՛ անմիտ,
Հըզօրդ ելով յաղթանակել տըկարին·
Օրէն թերեւս էր պարծել,
Զօրագունին քան ըզքեզ թէ գտանէիր յաղթական ։

## ԱՌԱԿ Ժ.

## ԷՇ ԱՌ ՔՆԱՐ

*Զի յաճախ ըստ արկածից բախտին կորնչի հանճար .*

---

Քնար անտէրունչ տեսեալ էշոյ ընդ արօտ ,
Մատեաւ 'ի փորձ սրմբակաւն .
Եւ երբեւ լարքն հընչեցին ,
Հրաշագան , ասէ , գործի օ՛ն և օ՛ն ,
Այլ չարադէպ ինձ պատահեալ որ չեմ ակահ արուեստին .
Զի հըմտագոյն ոք զայն յանկարծ թէ գտանէր ,
Ի նուագ ըղձալելի զուարճ ընծայէր լըսելեաց ։
Այսպէս յաճախ ըստ արկածից մտանի հանճար 'ի կորուստ ։

---

## ԱՌԱԿ ԺԱ.

## ԱԳԱՂԱՂ ՍՊԱՍԱՒՈՐԵԱԼ Ի ԿԱՏՈՒՈՑ

*Կարի ապահովութիւն 'ի վտանգ ածէ յաճախ զմարդիկ .*

---

Աղուէս զաքլոր ետես կացեալ բարձր 'ի գլուխ
Մինչ դեսպակաւ բարձեալ բերէր 'ի կատուոց ,
Եւ զայս նըմա մատոյց խրատ .
Ազգուշացիր , ով սէգդ հաւիկ , 'ի դաւոյ .
Զի դէմք դոցա կրելեաց զաւար քան բեռնակրաց թըւին դէմք ։
Այն ինչ ապա քաղցեաւ ժողովըն վայրագ ,
Յօշեաց ըզվերելեակն , արար բաժինս աւարին ։

## ԱՌԱԿ ԺԲ.

### ԽՈԶ Ի ՑԵՐԿՈՒՆՍ ԵՒ ԳԱՅԼ

*Ծանիր յոր ապաւինիս.*

---

Խոզ 'ի յերկունըս գոլով
Մինչ առ ցաւոցըն ձիչ բարձեալ խըռընչէր ,
Ելին առ նա գայլ յօգնութիւն ,
Եւ ըղձնուցչի նըմա զըսպաս մատուցանել խոստանայր :
Նա խորամանկ դաւոյն ոչ ինչ անտեղեակ ,
Ի բաց զըսպասըն կեղակարծ մերժելով ,
Շատ է , ասէ , զի 'ի բացեայ եւեթ կացցես դու յինէն :
Որոյ 'ի գայլըն նենգաժետ թէ էր եղեալ ապաստան ,
Ոչ ինչ ընդհատ նըմա ըզբախտ իւր աւաղել հասանէր :

---

## ԱՌԱԿ ԺԳ.

### ԵԶՈՎՊ ԵՒ ԾԱՌԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆ

*Մի՛ չար 'ի չարիս քո յաւելուր.*

---

Ի բըռնաւոր տեառնէ ծառայ գնացական ,
Ծանօթին իւրում դըրացւոյ դիպեալ յանկարծ Եզովպայ ,
Հարցաւ թէ յո՞ խուռլեալ երթայր , և ասէ .
Լուր ինձ , հայր , զի արժանի իսկ ես դու հայր կոչելոյ .
Յուցից անկեղծ զամենայն ,
Քանզի անքոյթ քեզ աւանդեմ զանգատանք :
Գանք ինձ պատրաստ կան յամենայն ժամ, չիք իմ, հայր , կերակուր .
Նըքօղեալ զընամ 'ի գիւղ , եթէ ընթրէ նա 'ի տան ,
Ըզցայգն 'ի բուն կալ 'ի պահ .
Իսկ թէ հրաւէր հասանէ , առաւօտեմ 'ի գըռեհս .
Ըզգատութեան լեալ արժանի , կամ աւելոր դեռ ծառայ .

Եթէ չարեաց երեք էի մեղապարտ ,
Համբերէի մտադիւր ·
Աւաղ հիքիս , ոչ թէ միայն գտանիմ սովեալ հանապազ,
Այլ և ունել ունիմ ինձ տէր գլխահար ·
Այսոցիկ աղագաւ , և զի մի մի քեզ թուիցեմ,
Եդի 'ի մտի խուսել ուր գնայցք իմ բեռին :
Առ որ Եսովպ · Եթէ քո չէք մեղուցեալ
Եւ կրել ասես վիշտս այդքան ,
Իսկ որչափ ես առաւել
Ի մեղանչել քում յաւելցես դու 'ի կրել :
Խրատեալ այսուիկ ըշկայ էառ նա 'ի գնալոյ փախըստեայ :

---

## ԱՌԱԿ ԺԴ·

## ՁԻ ԳՈՒՊԱՐԱՅԱՂԹ ՎԱՐԵԱԼ ՅԱՂՕՐԻՍ

*Համբերութեամբ տարջիր արկածից .*

---

Ազբազմայաղթ 'ի քառաձիս երիվար
Առեալ ուրումն և ետ 'ի տուն աղօրեաց :
Նա 'ի գնալն անտի երբեմն ածեալ յաղբիւր անդր 'ի յումպ ,
Տեսանելով ըզհամազգիս իւր զի գնային 'ի կրկէս ,
Գործել մարտիւ ախորժ ըզտօնըս խաղուց ,
Ով երջանիկք դուք , ասէ՝ հեղեալ արտօսր յորդահոս ,
Երթայք առանց իմ ըզհանդէս 'ի կառարշաւս յաճախել ·
Իսկ ես ուր ձեռն ամպարիշտ յափըշտակեալ վարեաց զիս ,
Գուռըն բախտիւ զաղէտս իմ աստ ողբացայց :

## ԱՌԱԿ ԺԵ·

### ԱՐՋ ՍՈՎԵԱԼ

*Զկենդանեաց իսկ սրէ քաղց զհանճար.*

---

Արջ'ի մայրիս եթէ երբէք ոչ գտանէ իւր ճարակ ,
Ի ծովափն ուրեք դիմեալ'ի ժայռուտ ,
Եւ զկայ առեալ'ի վիմի ,
Տակաւ ըզսրունսըն մըխըրճէ անդր 'ի հուն ․
Եւ 'ի գալ խեչափառից կըռուել յոտիցն 'ի մուշտակ ,
Անդէն ընդոստ 'ի ցամաք
Օաւարառեալ ժըժմակսն 'ի բաց թօթափէ ,
Եւ ըմբռշխնէ նենգախոշոշն եղեալ նոցին հաս և խած ․
Այսպէս քաղցըն և զանմըտին սրելով զուշ ։

---

## ԱՌԱԿ ԺԶ·

### ՈՒՂԵՒՈՐ ԵՒ ԱԳՌԱՒ

*Պատրին բազումք բանիւք սնոտիովք .*

---

Ոմն արտուղի ընդ արտորայս կալեալ ռահ ,
Լըւաւ յանկարծ ձայն որ ասէր նըմա , կաց ․
Նա զկայ առեալ վայրիկ մի , իբրև չետես զոք ուրեք ,
Յառաջ խաղաց , և ձայնն անդրէն ըզնոյն կըրկնէր , կաց ։
Հիւրասիրի ուրուք վարկաւ նա զայն հրաւէր , և եկաց
Ըսպաս նըմին ո ոք և էրն ընծայել ․
Այլ'ի պատրանս անդ շուրջ դիտեալ ընդ երկար ,
Իբրև կորոյս նա ասպարէզ ոչ սակաւ ,
Երևեալ'ի թուխս ագռաւ , Կաց կաց , յաւել միւսանգամ ։
Յայնժամ'ի միտ առ նա զպատրանսն և ասէ ․
Նըզովք հասցեն քեզ հաւ չար ,
Որ ըզգնացս իմ ճեպընթացս արգելեր ։

## ԱՌԱԿ ԺԷ.

### ՀՈՎԻՒ ԵՒ ԱՅԾ

*Զիք ինչ գաղտնի որ ոչ 'ի յայտ գայցէ.*

---

*Հովուի զուրուամն յայծից բեկեալ զեղջիւր ցըպոյն 'ի հարուած,*
*Մի՛ զայն յայտնել տեառըն իւրում՝ աղերս նըմա արկանէր ։*
*Իսկ նա ասէ ․ Թէպէտ անպարտ վըշտակրեալ,*
*Սակայն լըռել լըռեցից ․*
*Այլ ինքնին իսկ մեղք քո գայցեն յերևան ։*

---

## ԱՌԱԿ ԺԸ.

### ԻԺ ԵՒ ՄՈՂԷԶ

*Ի պակասել զօրութեան՝ խելս խառնեսցիր.*

---

*Իժի կալեալ ըզմողէզ*
*Նա լայնաբաց ըզնա ժանեօքն իբրև կլանել պատրաստէր,*
*Սեպ ըստ դիպաց եգիտ նա անդ առընթեր,*
*Նա ուժգնակի խածմամբ կալեալ զայն 'ի շեղ,*
*Որկ խորագէտ հընարիւքն արգել գժոխորակյն որկորյն ․*
*Նա իժն ելէք զաւարն ումպէտ 'ի ժանեաց ։*

## ԱՌԱԿ ԺԹ.

## ԱԳՌԱՒ ԵՒ ՈՋԽԱՐ

*Հարստահարեն բազումք զտկարս, տեղի տուեալ հզօրաց.*

---

Յուս ոչխարի եկաց ագռաւ դըժպըհի.
Նա զակամայ բեռնըն բերեալ ընդ երկար,
Ապա ասէ. Օ՜ այդ եթէ շան չարաժանւոյ առնէիր,
Ըզչարեացդ արդեօք տայիր դու ըզվըրէժ:
Առ որ յաւել չարաշուէրն.
Արհամարհեմ ըզտըկարս, իսկ հըզօրաց տեղի տամ.
Ճարտար գիտեմ զո՛ խըթել, և ո՛ւմ չընթել փաղաքուշ.
Այսպէս ձըգեմ ըզծերութիւն յամերամ:

---

## ԱՌԱԿ Ի.

## ՆԱՊԱՍՏԱԿ ԵՒ ԵՐԿՐԱԳՈՐԾ

*Բազումք են բանիւք բարեմարդիկ և սրտիւ նենգաւորք.*

---

Թեթևընթաց ոտամբ խուսեալ Նապաստակի յորսողէ,
Ի սըպըրդեըն ընդ ցանկապատ՝ ական դիպեալ մըշակի,
Նըրդուեալ՚ի զիս, ասէ, և իմ իմիք ցանկայ անձըն քո,
Մի՛ զիս մատներ, ոչ ինչ անդոյ քում մեղայ:
Իսկ շինականն ասէ. Թագիր աներկիւղ:
Եւ ահա գայր որսորդն ըզհետ հասանէր.
Ազէ մըշակդ, եա՞նց աստի Նապաստակ:
Իսկ նա. Այո՝ եանց, այլ գնաց ընդ աջեակ.
Ասէ, և յաջն ակնարկէ:
Բայց առ ձեպի որսորդն ինչ ոչ իմացաւ.
Եւ իբրև անց, ասէ մըշակն յայնժամ. Օ՜ խա՛րդ թըւի քեզ,
Ո՞չ ապաքէն բարւոք ըզքեզ թագուցի:
Բարւոք լեզուաւդ, ասէ, ժըխտել ոչ կարեմ,
Շնորհ իսկ լեզուիդ ունիմ յոյժ,
Այլ նենգաւոր ականողեաց քոց կուրանալ ըղձանամ:

## ԱՌԱԿ ԽԱ․

## ԱՐՏՈՒՏ ԵՒ ԱՂՈՒԷՍ

*Մի՛ վստահիր 'ի չարս ․*

---

Հաւն 'ի գեղջկաց երկրեղէնիկ յորջորջեալ,
Այն որ զերկրաւ դըղնէ բոյն,
Պատահեալ անօրինին աղուեսու,
Յերեսաց նորա թըռեաւ ընդ երկին ։
Իսկ նա ասէ ․ Ցիս հաւիկ, է՞ր դու խուսես,
Մինթէ չիցէ՞ առատ 'ի դաշտս ինձ ճարակ
Ուըղըրիդ բըղէզ և ջորեակ ․
Եւ դու ընդէ՞ր զանգիտես, սիրով յինէն սիրեցեալդ
Որ զհեզութիւն յանձին բերես և ըզկենցաղ անարատ ։
Բարուք դու զիս խրատես, յաւել հաւն յայնժամ,
Սակայն թէ ոչ քեզ ընդ երկիր՝ գամ զուգընթաց ընդ երկին,
Հերիք աստի վըստահացեալ զանձն 'ի քեզ ։

---

## ՎԵՐՋԱԲԱՆ

*Վասն որոց զնատեսնիկս զայս յակն արկանիցեն ․*

---

Ըզմուսային իմոյ զայս ծըր և է խաղ,
Ընդ բարեկամս և յաչաղկոտք իսկ գովեն ․
Այլ նոքա անկեղծութեամբ, սոքա զայրոյթ 'ի սըրտի ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ՅԱՆԿ


| | ԷՋ |
|---|---|
| Ագաղաղ սպասաւորեալ'ի կատուաց | 102 |
| Ագռաւ, Արծիւ և Կրիայ | 32 |
| Ագռաւ և Աղուէս | 17 |
| Ագռաւ և Ոչխար | 107 |
| Ագռաւ և Ուղեոր | 105 |
| Ախտք մարդկան | 67 |
| Աղաւնիք և Ուրուր | 25 |
| Աղուէս, Գայլ և Կապիկ | 15 |
| Աղուէս և Ագռաւ | 17 |
| Աղուէս և Արագիլ | 24 |
| Աղուէս և Արծիւ | 24 |
| Աղուէս և Արտուտ | 108 |
| Աղուէս և Դիմակ | 14 |
| Աղուէս և Խաղող | 60 |
| Աղուէս և Կապիկ | 95 |
| Աղուէս և Նոխազ | 66 |
| Աղուէս և Վիշապ | 73 |
| Աղջիկ, Պառաւ և Այր | 28 |
| Այծ, Արջառ, Ոչխար և Առիւծ | 13 |
| Այծ և Հովիւ | 106 |
| Այծք և Քաղք | 70 |
| Այր և Աքիս | 22 |
| Այր, Աղջիկ և Պառաւ | 28 |
| Անգղ և Շուն | 24 |
| Առակախօսն զգիւրահաւանութենէ | 45 |
| Առակախօսն. — Այր անմիտ որ ինչ ինքն գործէ, զայն ևեթ արդար համարի | 64 |
| Առակախօսն. — Զգուեալն կատարել չէ անփառունակ | 74 |
| Առիւծ, Արջառ, Այծ և Ոչխար | 13 |
| Առիւծ և Էշ | 16 |
| Առիւծ զառամ, Կինճ, Ցուարակ և Էշ | 21 |
| Առիւծ թագաւորեալ | 69 |
| Արագիլ և Աղուէս | 24 |
| Արծիւ և Աղուէս | 24 |
| Արծիւ, Ագռաւ և Կրիայ | 32 |
| Արծիւ, Կատու և Վարազ | 29 |
| Արծիւ, Որսորդ և Ուղեոր | 28 |
| Արջ սովեալ | 105 |
| Արջառ, Այծ, Ոչխար և Առիւծ | 13 |
| Արջառ և Գորտ | 23 |
| Արջառք և Եղջերու | 33 |
| Արտուտ և Աղուէս | 108 |
| Աւազակ և Ուղեորք | 83 |
| Աւազակք և Ձորիք | 33 |
| Աքիս և Այր | 22 |
| Աքիս և Մկունք | 59 |
| Աքսից և Մկանց կռիւ | 64 |
| Բարեկամաց (զ) Սոկրատ | 45 |
| Բժիշկ կարուակ | 18 |
| Բուք, Մեղուք և Պիծակ | 48 |
| Գայլ և Գառն | 10 |
| Գայլ և Խող'ի յերկուՆս | 103 |
| Գայլ և Կռունկն | 14 |
| Գայլ, Աղուէս և Կապիկ | 15 |
| Գայլ, Շուն և Ոչխար | 19 |
| Գայլ և Շուն | 43 |

Էջ.

Գաղղիացիք և Էշ . . . . 60
Գառն և Գայլ . . . . 10
Գառն և Շուն . . . . 50
Գլուխ կապկի . . . . 41
Գող սեղանակապուտ. . . . 67
Գորտ և Արջառ . . . . 23
Գորտք առ Արև . . . . 13
Գորտք 'ի խնդիր Թագաւորի . . 10
Գորտք և Ցուլք . . . . 25
Դեմետր և Մենանդր . . . 82
Դիմակ և Աղուէս . . . . 14
Դիոս (առ) Պատգամաւորք շանց . 71
Եղբայր և Քոյր . . . . 44
Եղջերու առ աղբեր . . . . 16
Եղջերու և Արջառք . . . . 33
Եղջերու և Ոչխար . . . . 19
Եսովպ առ լեզուագար . . . 53
Եսովպ առ մատենագիր ոմն . . 99
Եսովպ և Ըմբիշ . . . . 101
Եսովպ և ծառայ փախստական . . 103
Եսովպ և Ստահակ . . . . 41
Եսովպ և Տանուտէր . . . . 101
Եսովպ 'ի խաղի . . . . 49
Երկրագործ և Նապաստակ . . . 107
Եւտիքոս (առ) փեդրոս . . . 37
Զինուոր և Պոմպէոս . . . 99
Զուարակ, Առիւծ զառամ, կինճ և Էշ . 21
Զուարակ և Որթ . . . . 90
Էշ, Առիւծ զառամ, կինճ և Զուարակ 21
Էշ առ վարիչ իւր . . . . 19
Էշ առ քնար . . . . 102
Էշ և Առիւծ . . . . 16
Էշ և Գաղղիացիք . . . . 60
Էշ և Մարդ . . . . 85
Ըմբիշ և Եսովպ . . . . 101
Իժ և Խարտոց . . . . 66
Իժ և Մողէզ . . . . 106
Իշխան փողար . . . . 88
Լեառն ծննդական . . . . 76
Խաղող և Աղուէս . . . . 60
Խարտոց և Իժ . . . . 66
Խեղկատակ և Շինական . . . 86
Խող 'ի յերկուսն և Գայլ . . . 103
Ծառք ընդ դիցն խնամօք . . . 52

Էջ.

Կապիկ, Գայլ և Աղուէս . . . 15
Կապիկ և Աղուէս . . . . 95
Կապկի գլուխ . . . . 41
Կատու, Արծիւ և Վարազ . . . 29
Կատուք և Աքաղաղ . . . . 102
Կարուակ բժիշկ . . . . 18
Կեսար առ Սպասաւորն . . . 30
Կինճ, Առիւծ զառամ Զուարակ և Էշ . 21
Կնդակ և Ճանճ . . . . 84
Կնդակք երկու . . . . 87
Կոկորդիլոս և Շուն . . . . 23
Կռիւ Մկանց և Աքսից . . . 64
Կռունկն և Գայլ . . . . 14
Կրիայ Արծիւ և Ագռաւ . . . 32
Հերա (առ) Սիրամարգ . . . 52
Հովիւ և Այծ . . . . 106
Հովիւ և Յովազ . . . . 40
Ձի գուպարայաղթ վարեալ յաղօրիս . 104
Ձի և Վարազ . . . . 61
Ղեկավար և Նաւաստիք . . . 70
Ճայ և Սիրամարգ . . . . 12
Ճանճ և Կնդակ . . . . 84
Ճանճ և Մրջիմն . . . . 76
Ճանճ և Ջորի . . . . 42
Ճնճղուկ և Նապաստակ . . . 15
Ճպուռն և Ջղջիկան . . . . 51
Մարգարիտ (առ) Վառեակ . . . 48
Մարդ և Էշ . . . . 85
Մարդ և Շուն . . . . 29
Մարդ և Օձ . . . . 72
Մեծութիւնք չար են . . . . 68
Մեղուք, Բոռք և Պիծակ . . . 48
Մենանդր և Դեմետր . . . . 82
Մկանց և Աքսից կռիւ . . . 64
Մկունք և Աքիս . . . . 59
Մողէզ և Իժ . . . . 106
Մրջիմն և Ճանճ . . . . 76
Յովազ և Հովիւ . . . . 40
Նախերգանք քերթողին Ա և Բ գրոց 9 · 27
Նախերգանք · փեդրոս առ Եւտիքոս . 37
Նախերգանք Դ · գրոց . . . 58
Նախերգանք Ե · գրոց . . . 81
Նապաստակ և Երկրագործ . . . 107
Նապաստակ և Ճնճղուկ . . . 15
Նաւաբեկութիւն Սիմոնիդեայ . . 74

Էջ

Նաւաստիք և Ղեկավար . . . 70
Նոխազ և Աղուէս . . . . 66

Շանց պարգամաւորք առ Դիոս . . 71
Շինական և Խեղկատակ . . . 86
Շուն պատրեալ . . . . 12
Շուն, Ոչխար և Գայլ . . . 19
Շուն ծննդական . . . . 20
Շուն և Անգղ . . . . 24
Շուն և Գայլ . . . . 43
Շուն և Գառն . . . . 50
Շուն և կոկորդիլոս . . . 23
Շուն և Մարդ . . . . 29
Շուն և Որսորդ . . . . 91
Շուն հաւատարիմ . . . 22
Շունք սովեալք . . . . 21

Ոչխար, Արջառ, Այծ և Առիւծ . 13
Ոչխար և Ագռաւ . . . . 107
Ոչխար և Եղջերու . . . 19
Ոչխար, Շուն և Գայլ . . . 20
Որթ և Ջուարակ . . . . 90
Որսորդ, Արծիւ և Ուղևոր . . 28
Որսորդ և Շուն . . . . 91
Ուղևոր, Արծիւ և Որսորդ . . 28
Ուղևոր և Ագռաւ . . . . 105
Ուղևորք և Աւազակ . . . 83
Ուրուր և Աղաւնիք . . . 25

Չար են մեծութիւնք . . . 68

Պառաւ, Աղջիկ և Այր . . . 28
Պառաւ առ Սափորն . . . 40
Պատգամաւորք շանց առ Դիոս . 71
Պատեհութիւն 'ի պատկերի . . 90
Պարտիկուլոն (առ) Քերթողն . 57
Պիծակ, Մեղուք և Բոռք . . 48
Պոմպէոս և Ջինուոր նորա . . 99
Պրոմեթէոս և Նենգ . . . 96

Ջղջիկան և Ճպուռն . . . 51
Ջորի և Ճանճ . . . . 42
Ջորիք և Աւազակք . . . 33

Սափորն (առ) Պառաւ . . . 40
Սեղանակապուտ գող . . . 67
Սիմոնիդեայ նաւաբեկութիւն . 74
Սիմոնիդէս պահպանեալ . . 77
Սիրամարգ առ Հերա . . . 52
Սիրամարգ և Ճայ . . . . 12

Էջ

Սոկրատ զբարեկամաց . . . 45
Սպասաւորն (առ) կեսար . . 30
Ստահակ և Եսովպ . . . . 41

Վառեակ առ Մարգարիտն . . 48
Վարազ, Արծիւ և կատու . . 29
Վարազ և Ձի . . . . . 61
Վերջաբան վասն որոց զմատենիկս զայս յակն արկանիցեն . . . 108
Վերջաբան Քերթողին Բ. գրոց. — Նա-խանձն ընկեր առաքինութեան. . 35
Վերջաբան Քերթողին Գ. գրոց. — Բա-զումս օգնէ, որ երագէ յօգնութիւն. 54
Վերջաբան Քերթողին Դ. գրոց. — Մա-նագրութեան չէք սահման . . 79
Վիշապ և Աղուէս . . . . 73

Տանուտէր և Եսովպ . . . 101

Ցուլք և Գորտք . . . . 25

Փեդրոս առ Եւտիքոս . . . 37
Փողար իշխան . . . . . 88

Քաղք և Այծք . . . . . 70
Քերթողին նախերգանք Ա. և Բ. գրոց 9. 27
Քերթողին վերջաբան. — Նախանձ ընկեր առաքինութեան . . . . 35
Քերթողին նախերգանք առ Եւտիքոս . 37
Քերթողին վերջաբան. — Բազումս օգնէ, որ երագէ յօգնութիւն . . . 54
Քերթողին վերջաբան. — Մատենագրու-թեան չէք սահման. . . . 79
Քերթողին նախերգանք Դ. գրոց . 58
Քերթողն առ Պարտիկուլոն . . 57
Քերթողն զգիւրահաւանութենէ. . 45
Քերթողն զախտից մարդկան . . 67
Քերթողն զհրամանաց Ապողոնի . 98
Քերթողն. — Զմարդիկ ոչ թէ թուել, այլ կշռել պարտ է. . . . 62
Քերթողն. — Չար են մեծութիւնք . 68
Քերթողն. — Զգտեալն կատարել չէ ան-փառունակ . . . . . 74
Քերթողն. — Պատեհութիւն 'ի պատկերի 90
Քերթողն. — Մի յառաւելն ձգտիր . 96
Քերթողն. — Լեր իմաստից և մի գրոյն մտադիր . . . . . 97
Քոյր և Եղբայր . . . . 44

Օձ և Մարդ . . . . . 72

2953

2013